



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

491.99-8

U-25

4004

Hayden's
Cathedral

12. 1295

2010

№ 8 2002

49154282
Մ-26

Հրատարակութիւն Ն. Տ.-ՂԵՆՈՆՂԵԱՆԻ

ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

(ՍԱՍՈՒՆՑԻ ԴՍԻԻԹ ԿԱՄ ՄՅԵՐԻ ԳՈՒՈԸ)

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ

ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ

ՅՕՐԻՆԵՑ

Ս: Մ Ա Ն Դ Ի Ն Ե Ա Ն

Զորքորդ տիպ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանի

Гип. М. Вартапянца, Гаповская улица.

1894

Գինն է 25 կոպէկ:

491.99-8⁵ Հրատարակութիւն Ն. Տ.-Ղեկնդեանի
Մ-25

ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

428 (ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ ԿԱՍ ՄՅԵՐԻ ԴՈՒՈԸ)
146-ՄԱ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ

ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ

ՅՕՐԻՆԵՑ

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

2-րդ տպ.



ԹԻՖԼԻՍ.

Տպարան Մովսես Վարդանեանի

Тип. М. Бартамянца, Гановская улица.

1893

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆ
1893

ՎԱՍԿՈՆՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 13-го Юля. 1893 г.

1893

1893

ԳԻՏԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆ

Ա.

Ս. Կարապետը Հայերի Համար փառք ու պարծանք է, զօրաւոր եւ հարուստ է: Շատ իշխաններ եւ բռնաւորներ նախանձել են Հայերին եւ ուզեցել են կորզել նրանց ձեռքից Ս. Կարապետը, որովհետեւ նա ունի շատ հարստութիւն եւ կալուածք, անտառ ու դաշտ, ոչխար եւ տաւար:

Բաղդադ քաղաքը առաջ շատ շքեղ եւ մեծ էր. նրա խալիֆան զօրեղ եւ կտրիչ մարդ էր: Սա զօրք ժողովեց եւ եկաւ մեր սուրբ Կարապետի վրայ, շատերին գերի տարաւ եւ մեր ազգը շատ նուաղեցրեց:

Գերիների մէջ լինում է մի շատ սիրուն աղջիկ: Բաղդադի խալիֆան հաւանում է նրան եւ իրան կին է առնում: Մէկ ժամանակից յետոյ երկու տղայ է լինում այդ կնոջից. մէկի անունը դնում են Աբամէլիք, միւսին՝ Սահասար: Սրանց հայրը կռապաշտ էր, իսկ մայրը խաչապաշտ, որովհետեւ մայրը մեր ազգիցն էր:

**

Այդ խալիֆան մի անգամ էլ զօրք ժողովեց՝ եկաւ մեր ազգի վրայ: Մեր ազգը (մեռնեմ սուրբ Կարապետի հրաշքին) այս անգամ նրան շատ նեղը լծեց: Այնպէս որ այս մեծ նեղութեան մէջ խալիֆան դիմեց իրանց կուռքին եւ ասաց. «Ո՛վ մեծ կուռք, դու ինձ ազատիր այս ազգից, եւ երբ ես ողջ վերագառնամ, խոստանում եմ՝ իմ երկու տղայքը քեզ մատաղ անեմ»:

Նրանց մայրը քնեց, երազ տեսաւ: Տեսաւ որ ինքն երկու ճրագ ունէր. այդ ճրագները, իբր թէ, մէկ ուզում էին հանգչիլ, մէկ էլ դարձեալ սկսում էին լոյս տալ: Առաւօտը վեր կացաւ եւ, միտք բերելով, պատմեց երկու տղայոց երազի եղելութիւնը եւ ասաց. «Այս գիշեր երազումս Ս. Կարապետն ինձ երեւաց, ասաց թէ ձեր հայրն ընկել է նեղութեան մէջ եւ ձեզ մատաղ է խօստացել իւր կուռքերին: Ուրեմն երբ որ գայ՝ ձեզ պիտի մատաղ անէ: Գնացէք, ձեր ճարը գտէք»:

* * *

Եղբայրները Աստուած կանչեցին, վեր առան իրանց պաշարը, լցրին պարկը եւ ճանապարհ ընկան: Ընկան ճանապարհ եւ շատ պտտեցին. տուին դուրս եկան օտար երկիր:

Գնացին հասան մի նեղ ձոր եւ տեսան, որ մի գետ է գալիս անցնում. միւս կողմից մի առու էր գալիս մոնում այդ գետը, կտրում էր նրան եւ ուժով շերտում էր մինչեւ մէջտեղը, եւ ապա խառնում նրա հետ ու գնում: Սանասարը շատ զարմացաւ այս բանի վրայ եւ Աբամէլիքին ասաց. «Ո՛վ որ այդ ջրի ակը գտնէ եւ իւր տունը այդ ջրի վրայ շինէ, նրան եթէ զաւակ լինի, այդպէս ուժեղ կը լինի»:

Վեր կացան երկու եղբարք, առուն բռնեցին ու գնացին: Գնացին եւ աղբիւրը գտան: Այդ աղբիւրի ջուրը մի

մատի հաստութեամբ ջուր է. գալիս է, բոլորովին կտրում է իւր տակի առուն եւ յետոյ մի անգամ էլ դառնալով՝ խառնում է նրա մէջ:

Նստում են սոքա այդ աղբիւրի գլխին եւ իրանց բերդի հիմքը ձգում:

Սանասարը որսի էր գնում, իսկ Աբամէլիքը աշխատում էր բերդի շինութեան վրայ: Այդտեղի մօտակայքում դեռ ուրիշ բնակութիւն չկար:

Տասն կամ քսան օր բանեցին այդ ամրոցի վրայ: Աշխատանք էր, որ նրանք անդադար կրում էին: Աբամէլիքը մի օր գնաց տեսաւ, որ Սանասարը յոգնած պարկել էր: Սրիւնոտ որսերը հէնց առանց եփելու թափել էր գետին ու քնել: Շատ կսկծաց նրա դրութեան վրայ եւ ասաց. «Նղբայր, վեր կաց գնանք մի տէր գտնենք. մինչեւ երբ պէտք է մենք այս տեղ մնանք եւ անալի միս ուտենք: Աստուած որ տուել էր, մեզ մեր հօր պալատն ու ամրոցը կը տար»:

* * *

Երկուսն էլ հեծան ձիերը եւ դիմեցին Արզրում նրստող իշխանին: Գնացին այդ իշխանին գլուխ տուեցին: Ահա գին եւ ուղածիդ պէս ակնածելի մարդիկ էին այդ երկու եղբայրները:

Արզրում նստող ամիրան շատ հաւանեց դրանց, հարցրեց դրանց ազգն ու հայրենիքը եւ ասաց. «Գուր ինչ մարդ էք»:

— Մենք Բաղդադի խալիֆի որդիքն ենք, ասաց Սանասարը:

«Հայ, հայ, հայ, ասաց ամիրան եւ դրանց առաջ թափ տուեց իւր փողպատը. մենք դրանց մեռելներէն էինք վախենում, հիմի կենդանիներին պատահեցանք: Ուր կ'երթաք՝ գնացէք, մենք չենք կարող ձեզ տէր լինել»:

Այնտեղից յետ դարձան եւ քշեցին գնացին Ղարսում նստող ամիրայի մօտ, նա էլ այդպէս խորշեցաւ նոցանից։ Եւ նրանք այդտեղից էլ դառնալով՝ մոլքները դրին որ այս անգամ Կապուտկոզի թագաւորին գնան։

Սանասարն ասաց Աբամէլիքին. «Եղբայր, մենք այդ հօրիցն ենք փախչում, բայց ինչո՞ւ նրա անունն ենք դրել մեր վրայ. այսուհետեւ ուր որ գնանք, ով որ հարցնէ, պէտք է ասենք, թէ մենք բան չունինք՝ ոչ հայր, ոչ մայր, ոչ տուն, ոչ հայրենիք. գուցէ մարդիկ մեզ էլ տէր դառնան»։

* *

Երբ որ Կապուտկոզի թագաւորը դրանց տեսաւ, շատ հաւանեց։ Աբամէլիքը գլուխը խոնարհեցրեց եւ կանգնեց նրա առաջին. թագաւորը շատ սիրեց նրան եւ հարցրեց. «Ո՞րդիք, դուք որտեղից էք, ի՞նչ ունիք, ի՞նչ չունիք»։

— Ո՛հ, ոչինչ չունինք, ասացին, ոչ հայր, ոչ մայր եւ ոչինչ։

Վերջապէս Սանասարը կարգուեց ծխաքարշ տուող (չիբուխի), իսկ Աբամէլիքը սուրճ տուող (խահուէչի)։ Եւ այսպէս մի ժամանակ մնացին, եւ էլի շատ պէտք է մնային, եթէ ուրիշ միտք չունենային իրանց գլխում։

Մի օր Սանասարն ասաց Աբամէլիքին. «Մենք որ այսպէս ծառայենք, երբ պէտք է հասնենք մեր նպատակին. այնքան աշխատեցինք ու մեր շէնքը կիսակատար մնաց։ Մեզ տէր է պէտք, որ ժողովուրդ տայ մեզ եւ տիրանայ։ Առաւօտը ոչ դու սուրճ եփիր, ոչ ես ծխաքարշ պատրաստեմ, եւ չգնանք իշխանին երեւալու»։

Թագաւորը քնի մէջ իմացաւ դոցա մտադրութիւնը։ Առաւօտը ոչ մէկը երեւեցաւ, ոչ միւսը։ Թագաւորը կանչեց այդ մարդոց եւ ասաց. «Ո՞րդիք, առաջ ես մի՞թէ չհարցրի,

թէ ի՞նչ ունիք՝ հայր, մայր, եւ դուք պատասխանեցիք, թէ բան չունիք, Զեր միտքն ի՞նչ է»։

Պատասխանեցին. «Թագաւորն ապրած կենայ, ճշմարիտ է՝ հայր, մայր չունինք, բայց եթէ քեզանից ծածկենք, Աստուծուց ի՞նչ ծածկենք։ Մի ամայի տեղ շէնք ենք սկսել, փոքր ինչ վրան աշխատել ենք եւ թողել եկել. այս տեսակ աղբիւրի վրայ է»։ Եւ սկսան պատմել թէ ի՞նչ տեսակ աղբիւր է։ Թագաւորի սիրտը գութ ընկաւ դրանց վրայ եւ ասաց. «Ո՞րդիք, որովհետեւ այդպէս է, առաւօտը ձեզ մի քանի տուն կըտամ, գնացէք ձեր բերդը շինեցէք»։ Եւ տուեց դոցա քառասուն տուն։ Բայց ի՞նչ տուն. . . ամեն մէկին մի էշ ամենայն բարիքով բարձած եւ մէկ մէկ էլ ճախարակ հետը դրեց։

* *

Առաւօտը վեր կացան, ժողովեցին, կապեցին, բարձեցին իրանց բաները եւ ճանապարհ ընկան. գնացին, իջեւանեցան իրանց աղբիւրի եւ իրանց հիմքի վրայ։

Սանասարն ասաց Աբամէլիքին. «Առաջ այս բերդը շինենք, թէ այս ողորմելի աղբատների բնակարանները ու յետոյ շինենք մեր բերդը. այդ խեղճերը չեն կարող արելի տակ կենալ»։

Եւ սկսան շինութիւնները։ Աբամէլիքն այնքան զօրեղ էր, որ տասը տան տեղ էր փորում եւ տասը տուն շինում, այն միւսն էլ փայտերն էր բերում. եւ այսպէս բնակարանները երկուսով էին շինում։ Երկու եղբայրները չորս օրուայ մէջ քառասուն բնակութիւն շինեցին աւարտեցին։ Այս սկսեցին կիսատ թողած բերդը շինել եւ վերջացրին։ Այնքան ուժեղ էին, որ քարէ սեան քարէ սիւն զարկեցին, կա-

մարները քաշեցին եւ բերդն աւարտեցին:

Աբամէլիքը վերկացաւ եկաւ իւր թագաւորի մօտ եւ ասաց. «Մենք քո որդիքն ենք, մեր բերդը շինել եւ աւարտել ենք. հիմի եկել ենք քեզ մօտ եւ խնդրում ենք, որ գաս եւ մեր բերդին անուն դնես»:

Թագաւորը շատ սիրեց եւ պատուեց Աբամէլիքին եւ ասաց. «Լաւ է, որ ինձ չէք մոռացել», եւ ելաւ իւր աղջիկը Աբամէլիքին տուեց եւ որդեգրեց նրան:

Երբ որ աղջիկը պսակեցին, ելան թագաւորը, աղջիկն ու տղան եւ նոցա հետ էլ քեռի Թորոսը, ձի հեծան եւ գնացին: Նրանց հետն էլ շատ զօրք ու ժողովուրդ. տարան շատ զարդ ու պարգեւներ եւ մեծ հանդէս պիտի կառարէին: Աբամէլիքը նոցա առաջնորդեց եւ գնացին հասան բերդի տեղը: Աբամէլիքը գլուխ տուեց թագաւորին եւ ասաց. «Տէր, քո ոտիդ տակն է բերդը»: Թագաւորն ուրախացաւ, հրամայեց դրօշակները բանալ, զարդարուել, փող փչել, թմբուկ հարկանել, պարգեւներ հանել եւ մեծ հանդիսով բերդը մտնել:

Երբ որ մօտեցան՝ յանկարծ թագաւորն այնպիսի փառաւոր շքեղ բերդ տեսաւ, որ հիացած մնաց: Զարմացաւ, բայց շուտ էլ բարկացաւ եւ այնտեղից ձիու գլուխը դարձրեց, որ պիտի յետ գնար, եւ ասաց. «Դուք ձեր բերդին անուն դրել էք, վերջացրել, հիմի դիտմամբ կանչել էք ինձ, որ փորձէք»:

Թագաւորն ապրած կենայ, ասաց Աբամէլիքը, մէկ մենք, մէկ Սասունած գիտէ, որ այդ բերդին անուն չենք դրել. մենք միայն բերդ շինեցինք կանգնեցրինք»:

«Ե՛, ապրիք, լաւ վարպետ ձեռք էք ունեցել: Եւ որովհետեւ անուն չէք դրել, քարէ սեան սիւն էք տուել, հրամայում եմ եւ գրա անունը պէտք է լինի Սեանսիւն, Սասուն»:

Մէկ ժամանակ մնացին այնտեղ, քեռի Թորոսին էլ գլուխ կարգեցին եւ նա էլ այնտեղ մնաց: Թագաւորը դարձաւ իւր տեղը:

* *

Աբամէլիքը շատ կտրիչ մարդ էր: Մշի վերելով ինչ սարեր որ պատել, գօտի են կազմել՝ այդ ամենն էլ գրաւեց: Ել ոչ մէկ կողմը չթողեց, միշտ ձի էր հեծնում, իւր բերդի դռնից դուրս էր գալիս, եւ որքան ջին ու ջանավար էր տեսնում, բռնում էր, տէր էր դառնում:

Մի օր էլ գնաց մինչեւ Մուսուլ եւ այն էլ գրաւեց. այնտեղի թագաւորին սպանեց, առաւ նրա կինը եւ մի որդի ունեցաւ: Եւ որովհետեւ իւր անունը Աբամէլիք էր, որդուն անունը դրեցին Մսլամէլիք: Աբամէլիքը նստեց Մուսուլ եղաւ թագաւոր:

Իա այդտեղ թող նստած մնայ:

Բ.

Սանասարը նստած էր Սասուն: Իւր հօր կուռքերը չէին թողնում, որ այդտեղ հանգիստ մնայ, եւ ելաւ ճանապարհ ընկաւ ու գնաց Բաղդադ իւր հօր ու մօր մօտ: Նրա հայրը լուսամտի առաջ նստած էր, տեսաւ որ իւր որդի Սանասարը գալիս է, ճանաչեց եւ ասաց. «Ե՛յ, մեռնիմ քեզ մեծ կուռք, մեծ է զօրութիւնդ, որ քո մատաղը քաշեցիր բերիւր. երբեւիցէ միւսն էլ կը քաշես կը բերերես»: Իսկ մայրը որովհետեւ քրիստոնեայ էր, նստաւ արտասուեց իւր որդոց վրայ:

Հայրն առաւ թուրն ու սուրը եւ գնաց, կանչեց Սանասարին եւ ասաց. «Ո՛րդի, արի գնանք երկրպագութիւն տուր մեծ կուռքին, որ քեզ մատաղ անեմ»:—Հայրիկ, ասաց տղան, քո մեծ կուռքը շատ զօրաւոր կուռք է. գիշերն

էլ չէր թողնում, որ մենք այնտեղ հանգիստ մնայինք.
Երբեւիցէ միւս մատաղն էլ կը քաշէ կը բերէ»:

Առաւ տղային եւ մտաւ կռատուն:

Տղան ասաց հօրը. «Հայրիկ, դու գիտես, որ երբ մենք
գնացինք՝ պստիկ էինք. մենք քո կուռքի զօրութիւնը
չգիտենք. դու խոնարհիր, քո կուռքին երկրպագութիւն
տուր, տեսնեմ ինչպէս ես անում, որ ես էլ սովորեմ»:

— Այսպէս, որդեակ, ասաց հայրը եւ խոնարհեցաւ,
Երկրպագեց:

«Հայրիկ, ասաց տղան, տես քո կուռքն ինչ զօրաւոր էր.
Երբ որ դու խոնարհեցար՝ իմ աչքերը մթնեցան, չտեսայ,
թէ ինչպէս արեցիր»։ (Որովհետեւ արխալուխի կոճակները
չարձակուեցան՝ այս առաջին անգամ չհասաւ, որ զարկել էր):
Եւ յետոյ աւելացրեց. «Հայրիկ, մէկ անգամ էլ երկրպա-
գիր, տեսնեմ՝ ինչպէս ես անում, որ ես էլ անեմ»:

Եւ երբ որ հայրը կրկին խոնարհեցաւ, տղան ասաց.
«Ե՜ս հացն ու գինի, Տէր կենդանի», եւ մի գուրդ իջաւ,
եւ իւր հայր խալիֆային եօթն գաղ գետինն ի վայր իջե-
ցրեց: Ապա առաւ գուրդը եւ մտաւ կուռքերի մէջ, բոլորն
էլ ջարդեց, եւ առաւ արծաթներն ու լցրեց իւր արխալուխի
փէշը, բերեց տուեց մօրը եւ ասաց. «Մամօ, դոցանից զար-
գեր շինել տուր քեզ համար»:

Մայրը խոնարհեցաւ, երկրպագութիւն արեց եւ ասաց.
«Գոհանամ Քեզանից, երկնի եւ երկրի Ստեղծող, որ մեզ
այս բարբարոսի ձեռքից ազատեցիր»:

Եւ բերեց Սանասարին պսակեց եւ նստացրեց հօր գա-
հի վրայ:

Նա մնայ այնտեղ: Մենք գանք Աբամէլիքին:

* *

Գ.

Աբամէլիքը, որ Մուսուլ էր նստած, իւր զաւակ Մու-
լամէլիքին թողեց իւր տեղը, ինքը գնաց Սասուն: Այսպէս
անցաւ մի միջոց, մի ժամանակ. դրանից մի քանի որդիք
ծնուեցան. մէկի անունը դրեց ձնձղափոքրիկ, մեծ տը-
ղայինը՝ Յանվէգի, մէկինը՝ Զէնով Ուլան, մէկի անունն
էլ՝ Խոր Գուսան, ամենից պստիկն էլ՝ Դաւիթ:

Այդ տղայոց մէջ ձնձղափոքրիկն ու Յանվէգին ամե-
նեւին բանի պէտք չէին: Իսկ Զէնով Ուլանն այնպիսի ձայն
ունէր, որ եօթը գօմշի կաշի ձգում էր արեւը՝ չորացնում,
նրանով փաթաթւում, որպէսզի եթէ գողայ՝ ինքը չպատը-
ռուի եւ չորաքուի:

Խոր Գուսանը լաւ երգում էր եւ իւր խաղով աշխարհը
էր գրաւում:

Բայց ամենից աւելի հնարաւորն ու շնորհալին Դաւիթն
էր. նրա ուժը ոչ մէկ լեզուով չի պատմուի:

Այսպէս բաւական ժամանակ մնաց, ծերացաւ Աբամէ-
լիքը. մի օր նստաւ ինքն իրան մտածեց եւ ասաց. «Չորս
կողմը ինձ թշնամի եղաւ. իմ անկումից յետոյ՝ էլ ո՞վ պիտի
տէրութիւն անէ իմ որդոց: Թէ որ անէ՝ միայն Մուլամէլիքը
կարող է, թէ չէ՝ ուրիշ մարդ չի կարող դէմ դնել իմ
թշնամիներին»:

ձանապարհ ընկաւ եւ գնաց Մուլամէլիքին: Ծեր ժա-
մանակն էր, ասաց. «Մուլամէլիք, որդիս, դու էլ իմ զաւակս
ես. եթէ ես շուտ մեռնեմ, իմ որդիքս քեզ պահ կը տամ,
եթէ դու շուտ մեռնես, ես կը խնամեմ քո որդոց եւ կը
պահպանեմ»: Դարձաւ եկաւ, մնաց իւր բերդում: Մահուան
օրն եկաւ, մեռաւ: Մուլամէլիքն եկաւ նրա որդոց տարաւ,
ըստ որում հօր պատուէրը չէր մոռացել:

* *

Իսկ Սասունը իւր տիրոջ մահուանից յետոյ եօթը տարի սուգ մնաց. ամէն նոր ծնունդին խաղով իմաց կանէին Սբաժէլիքի մահը, ամեն մեռնողին եթէ հոգեւոյս ասէին՝ Սբաժէլիքն էլ հետը կը յիշէին. ոչ հարսանիք սնէին, ոչ ուրախութիւն:

Քեռի Թորոսն էր վշտացած ամենից շատ, որ աշխարհքը անտէր է մնացել եւ Սբաժէլիքի ժառանգները այսքան ժամանակ գերիների պէս նստած են հեռու իրանից:

Երբ որ գիւղացիք շատ սուգ արեցին, մի օր հաւաքուեցան, եկան քեռի Թորոսի մօտ եւ ասացին. «Քեռի Թորոս, մեր տղայքը ալեւորեցան եւ մեր աղջկերքը պառաւեցան. եթէ մեր եօթը տարի սուգ անելովը մեր Սբաժէլիքը կը կենդանանայ, մի եօթը տարի էլ աւելի պահէնք. պատրաստ ենք»:

Քեռի Թորոսը հրաման տուեց դրկից—հարեւաններին եւ ասաց. «Պսակեցէք ձեր տղաներին ու աղջկներին, սուգ պահելով ոչինչ չի լինիլ»:

Քեռի Թորոսն ու գիւղացիք նստան գինեխում սարքեցին ու խրախճացին: Միայն քեռի Թորոսն էր անմխիթար: Նա կթխան ձեռն առաւ, մնաց սառած եւ սկսեց մտածել՝ ոչ խմում է եւ ոչ վեր է դնում: Թորոսի տղան հեռուից ձայն տուեց եւ ասաց. Պապօ, դոքա Սասունի գժեր են. հիմա մի անպատիւ խօսք կ'ասեն քեզ, կամ խմիր, կամ դիր գետին ու գնա»:

Վեր առաւ հայրն ու տղին ասաց. «Հէյ անպիտան որդի, ես այստեղ նստեմ կերուխում անեմ, Մսլամէլիքը գայ մեր երեխաներին տանի, Սբաժէլիքի տղաներին քէտանի, ես այստեղ կերուխում անեմ: Ամօթ չէ՞ մեզ. հաց գինի ու Տէր կենդանի, քան այս կթխան աւելի խմած չըլլինք. ելնեմ երթամ իմ երեխաներին երեւամ»:

* *

Քեռի Թորոսը Սասունից խիեց ու գնաց Մուսուլ. ինքը գլուխ տուեց, Մսլամէլիքը գլուխ տուեց ու նստան: Թորոսն ասաց. «Ահա ես ու դու՝ դատաստան Աստրծու: Իրաւ է, դու եւ Սբաժէլիքը պայմանագիր էք եղել, բայց գերին գին ունի, տիրոջ կը հասնի»: Գնացին Աստրծու դատաստան. երեխաները Թորոսին վիճակուեցան:

Մսլամէլիքի աչքը շատ էր վախենում այդ տղաներից, ուստի քեռի Թորոսին ասաց. «Արի բեր այդ տղաներին անցկացրու իմ թրի տակով, յետոյ առ ու գնա»:

Քեռի Թորոսն եկաւ յայտնեց տղաներին:

Յանվէզին ասաց. «Գնանք անցնենք նրա թրի տակով եւ թողնենք երթանք»: Միւս երկուսն էլ նոյնն ասացին: Բայց Դաւիթը քար կտրուեցաւ եւ ասաց. «Սպանում է՝ թող այսօր սպանէ, որ մարդիկ ասեն, թէ մի երեխայ է սպանել: Ես նրա թրի տակով չեմ անցնիլ. այսպէս է անում, որ էգուց ես մեծանամ՝ սուր չբարձրացնեմ իւր վրայ»:

Քեռի Թորոսը ահից դոցա ժողովեց միատեղ, որ տանի, թրի տակով անց կացնէ: Դաւիթն ընդդիմացաւ, կանգնեց եւ չի գնում թրի տակը: Քեռի Թորոսը բարկացած բռնեց Դաւիթի օձիքը եւ հրեց, որ անցնի թրի տակով: Դաւիթը չգնաց թրի տակով, այլ կշտով անցաւ եւ իւր մեծ բուժը քարի վերայ քսուեցաւ՝ կրակ դուրս ելաւ նրանից: Երբ որ Մսլամէլիքն այս նկատեց՝ ասաց. «Դա որ դեռ փոքր է՝ այսքան է, որ մեծանայ՝ ի՞նչ կը լինի: Եթէ ինձ մի վնաս պատահի՝ դրանից կը լինի»:

Քեռի Թորոսն առաւ տղերանց եւ Սասուն եկաւ: Ամենին պաշտօնի կարգեց, ինչպէս կը վայելէր. Յանվէզուն բերդի մէջ թագաւոր դրեց հօր տեղ եւ Դաւիթն՝ որ ամենից պատիկն էր՝ հորթապահ արեց:

* *

Պ.

Դաւիթն էր, որ մի դազանակ զարկելով՝ քառասուն հորթ էլ հետը գլորում էր։ Զօր շատ ունէր, բայց հորթապահութիւն լաւ չսովորեց։

Մի օր էլ քշեց հորթերը՝ հանեց սարի գլուխը, տեսաւ որ հորթարածի մէկը իւր հորթերին անիծում է։ Դաւիթն այս կողմից գնալով՝ ասաց. «Ա՛յ մարդ, դու ի՞նչ ես անիծում. կաց գամ մի դազանակ տամ գլխիդ, որ սասանես»։

Իսկ նա պատասխանեց Դաւիթին. «Դիւիդ արեւիդ մեռնիմ. ես էլ քեզ պէս քո հօր գիւղի հորթարածն եմ, իսկ սոքտ ուսմկի հորթերն են»։

Եթէ այդպէս է, ասաց Դաւիթը, արի եղբայրանանք. միայն ես հորթատարի ճիշդ ժամանակը չգիտեմ, իմ հորթերն էլ դու պահիր. երբ որ գնալու ժամանակը լինի, իմ առաջը քշիր, որ տանեմ նրան»։

Եւ այդ օրը ճիշդ ժամանակին հորթերն առաւ ու եկաւ գիւղ։ Ուրախացաւ քեռի Թորոսն ու ասաց. «Ո՛րդի, ահա այդպէս աչքաքայտ եղիր՝ ամենայն օր ժամանակին գնա ու արի»։

Դաւիթն ասաց. «Քեռի, այդ իմ շնորհքը չէր. ես մի եղբայր եմ բռնել, ամենայն օր պիտի պահէ իմ հորթերը, ես էլ պէտք է լաւ տէրութիւն անեմ նրան»։

Մի օր Դաւիթի ընկերն ուշացաւ։ Դաւիթը շատ նեղացաւ. Դու մի ասա, այն տղայի գիւղում ցասման ժամ պատարագ էր, տղան էլ այդ պատճառով ուշացել է։ Եւ երբ որ եկաւ՝ Դաւիթն ասաց նրան. «Իմ ձեռքիցս այս օր ի՞նչ պէս պէտք է ազատուիս»։

— Դաւիթ, ասաց տղան, գլխիդ արեւիդ մեռնիմ, մի նեղանար։ Ես քո ահիցդ էլ չմնացի մինչեւի վերջ. եւ այն ցասման ճաշից մի գդալ էլ չկերայ. քշեցի հորթերն ու

եկայ։ Բայց ի՞նչ անեմ, որ իմ բախտիցս էլի քիչ ուշացե՛ր եմ։

Դաւիթը գթացաւ նրա վրայ, որ ճաշ չէ կերել, եւ ասաց. «Դու այդտեղ նստիր, ես գնամ քո ճաշն առնեմ բերեմ»։

Դաւիթը դրեց կօպալը ուտի վրայ եւ գնաց։ Գնաց մտաւ գիւղացոց մէջ. տեսաւ որ հարիսէքը բոլորը հանել դրել են կալում եւ քահանայք եկել օրհնում են։ Դաւիթը կօպալը ձգեց մի չորս կանթանոց լիքը պղնձի մէջ եւ ուտի վրայ շալկեց։ Զարմացան այդտեղի ժողովուրդն ու քահանաները։ Նոցանից մէկն ասաց. «Սա մեր պղինձը տարաւ, է՛»։

Քահանան աթաց. «Թէ Աստուած կը սիրէք, ձայն մի հանէք. դա Սասունի գժերիցն է. որ դառնայ, մեզ ջարդ ու փշուր կանէ. թող տանի՝ իւր գլուխն ուտի»։

Իսկ Դաւիթը կերակրով լիքը պղինձը ուտին՝ ընկերին է բերում։ Տեսաւ ընկերը նստած լաց է լինում։

«Հէ, հէ, ասաց զուարճանալով, գիտեմ ի՞նչի ես լաց լինում. ճաշդ բերել եմ, աղ ու իւղ չեմ բերել, նեղանում ես։ Սրի հիմա կեր ճաշդ, երեկոյին էլ վրէ՛ն աղ ու իւղ կեր, էլ պակաս ոչինչ չես ունենայ»։

— Դաւիթ, ասաց տղան, գլխիդ արեւիդ մեռնիմ. ես աղն ու իւղը ի՞նչ եմ անում։ Քառասուն աւազակ դուրս եկան, մեր հորթերը տարան գնացին։

«Դու այստեղ կաց, պատասխանեց Դաւիթը, այս տեղի հորթերիդ նայիր. ես գնամ մէկէնները դարձնեմ»։

Եւ ընկաւ հորթերի յետեւն ու գնաց. հետքը բռնեց եւ մի այրի դռան առաջ կանգնեց։ Այդտեղ Դաւիթը այն-

պէս պինդ գողաց, որ միջի դեւերի վրայ սարսափ ընկաւ: (Ինչպէս որ Քրիստոսի ձայնն ընկաւ դժոխքի մէջ եւ սատանէքը սատանեցան): Այդ աւազակների մեծն երբ որ լսեց, ասաց. «Վայ մեզ, դա Դաւիթն է՝ Աբամելիքի տղեն. ելէք, գլուխ տուեցէք եւ ծառայեցէք, որ մեզ չսպանէ»:

Մէկ-մէկ դուրս եկան եւ Դաւիթն էլ մէկ-մէկ կօպալ զարկեց, այնպէս որ քառասունի գլուխը թռցրեց, դիակը թողեց մնաց: Այդ քառասունի էլ ականջները կտրեց եւ տարաւ այրի մօտ մի քարի տակ պահեց: Այրի դուռը կօպալով կրճնկահան անելով՝ ներս մտաւ եւ տեսաւ, որ մի կոյտ ոսկի է, մի կոյտ արծաթ. աշխարհքի բարութիւնն ու հարստութիւնը այնտեղ էր: Քանի որ իւր հայրը մեռել է եւ ինչ որ աւերութիւն են արել դռքա, բոլորն այդտեղ էր լցրած:

Մի ուրիշ գուռ բաց արաւ եւ տեսաւ այնտեղ մի ձիու քուռակ կապած: Ինքնիրան խօսեց եւ ասաց. «Քեռի, այս գանձը բոլորը քեզ, բայց այս անասունն ինձ լինի. տալիս ես՝ տուր, չես տալիս՝ քեզ էլ սոցա օրին կը հասցնեմ»: Ինքը դարձեալ իւր գլխին պատասխանեց. «Որդի, գանձն էլ քեզ, անասունն էլ քեզ. ես ի՞նչ եմ անում»:

Դարձաւ տեսաւ, որ քառասնականթ մի պղինձ դրուած է օճախի վրայ, քառասուն հորթեր էլ մէջը: Կօպալը մտցրեց կանթերի մէջ եւ պղինձը վերցրեց. ջուրը դատարկեց եւ հորթերի ոտքերն էլ մէջը թափեց, շալակեց ու գնաց:

Եկաւ ընկերի մօտ, առաւ նրան ու մնացած հորթերը եւ դարձաւ եկաւ գիւղը: Կանչեց հորթերի տէրերին, աչքերը լաւ խոթողեց նրանց վրայ եւ գողաց. «Եթէ այս իմ եղբոր մի մասի չափ վարձը կտրէք, վայն եկել է ձեզ տաքել: Այս պղինձն էլ ձեզ լինի, ծախեցէք եւ թող ձեր հորթերի գինը լինի»:

Ինքն էլ ջուրեց իւր հորթերն ու կէտորին ձիւն վրա, քեռի Թորոսին ասաց. «Գնա, առ քսան ջորի եւ երթանք այնքան ապրանք բերենք, որ դու էլ ուտես, քո եօթը պորան էլ. մինչեւ երբ ես պէտք է հորթարած մնամ»:

Առան ջորիքն ու գնացին: Գնացին, մօտեցան այրին: Քեռի Թորոսը տեսաւ, որ դեւերը թափուած են այրի դռան առաջը եւ ուռել են մի-մի բլրի չափ: Երկիւղից իւր ջորին միւս ջորիներից բաժանեց ու փախաւ: Դաւիթը ծիծաղեց ու ձայն տուեց. «Տնաւեր, ես դոցա ողջերից չմխեցայ, դու մեռելներից ի՞նչ ես փախչում»: Քեռի Թորոսն ասեւ իսկի լսում է նրա խօսքերը. մի բերան փախչում է. Դաւիթը էլի յետեւից ձայն է տալիս. «Թէ չես հաւատում, դարձիր քո յետեւը, քարի տակ նայիր, բոլորի ականջները այդ տեղ եմ թափել»:

Քեռի Թորոսը որ տեսաւ, դարձաւ առաւ ջորիներն ու մտաւ այրը. ինչ կար-չկար ժողովեցին, բեռներ բարձեցին:

Դաւիթն ասաց. «Քեռի Թորոս, այս ապրանքը բոլորը քեզ, իսկ այս անասունն ինձ. տալիս ես՝ տուր, չես տալիս՝ քեզ էլ սոցա օրին կը հասցնեմ»:

Նա էլ պատասխանեց. «Որդի, ապրանքն էլ քեզ լինի, անասունն էլ, ես ի՞նչ եմ անում»:

Երբ որ քեռու բերանից խօսքն առաւ, հեծաւ քուռակը եւ քշեց մէկ այս կողմ, մէկ այն կողմ (ինչ քուռակ, նրա զօրութիւնը ոչ մէկ լեզու նկարագրել չի կարող):

Այսպէս ապրանքով, բեռներով եկան Սասուն: Դաւիթն այնուհետեւ հորթերից ձեռք վեր առաւ, մի լաւ բազէ գտաւ եւ արտերն ընկաւ՝ որս անելու:

Մի օր եկաւ մի աղքատի հանդիպեց, որ եօթը հոգուց բաղկացած մի ընտանիք ունէր, եւ միայն եօթը կորի կորեկն ողորմեց չորսը աւերեց, մնաց երեքը:

Տեսնողներից մէկը եկաւ, լուր բերեց աղքատ ծերունուն եւ ասաց. «Գո տունը չքանդուի, վեր կաց, գնա, արտդ տես, թէ չէ գիշերը Դաւիթը կըգայ, մնացած երեք կորին էլ կ'աւերի»:

Խեղճ ծերունին առաւօտեան լուսաբացից առաջ մինչեւ աղօթք արեց, վեր կացաւ գնաց, տեսաւ որ արտը փչացրել է: Դաւիթն էլ բազէն ձեռքին, քուռակի վրայ հեծած, եկաւ: Այդտեղ ծերն անիծեց Դաւիթն եւ ասաց. «Դու Աստուծոց բնաւ չե՞ս վախենում, որ իմ կորեկի վրայ ես բանեցնում քո կտրելովնը. ես եօթը հոգի ունիմ՝ պահելու եւ նոցա համար եօթը կորի կորեկ. չորսը փչացրել ես, մնացել է երեքը: Եթէ, իրաւ, կտրիչ ես, գնա քո հօր կալուածքը յետ առ, որ Ծծմակալ գլխից սկսած մինչեւ Սեղանասարի գօտին է գնում եւ Մարամէլիքը գրաւել ուտում է: Գնա՛ այն առ. ի՞նչ ես կտրիչ դառել իմ գլխիս»:

— Ծերունի, ասաց Դաւիթը. ինձ մի անիծիր, առ մի բռն ոտի եւ քո ապրուստը հոգացիր: Եւ սպանեց բազէին:

Դաւիթը նոր իմացաւ, որ ինքը շատ բանից զրկուած է եղել մինչեւ հիմայ եւ ասաց. «Քեռի Թորոս, վեր կաց իմ հօր գուրզն ու նետը տուր ինձ. իմ հօր կալուածքը օտարներն ուտում են եւ դուք ինձ ոչինչ չէ՞ք ասում»:

Քեռի Թորոսն ելաւ գնաց Յանվէգու մօտ, ուզեց նորա հօր գուրզն ու նետը: Յանվէգին չտուեց: Դաւիթը մի անգամ էլ դարձրեց ու ասաց. «Տալիս ես՝ տուր, չես տալիս՝ կը գամ, կը մարմնեմ, գլուխդ կ'երթայ, դիակդ կը մնայ»:

Յանվէգին վախից տուեց իւր հօր գուրզն ու նետը եւ քեռի Թորոսը բերեց տուեց Դաւիթին:

Այդ գիշեր Դաւիթը քնեց, մի երազ տեսաւ: Երբ որ զարթեցաւ, առաւ քառասուն երկնջ ու գնաց սուրբ Մարաթուկի բարձր մատուռը: Երիջները մատաղեց, շատ լաց եղաւ եւ երեսն ի վար աղաչեց Աստուծուն. Աստուած էլ նրան սուրբ Նշան ուղարկեց (հիմա էլ կայ ս. Նշանը): Նա համբուրեց սուրբ Նշանը, դրեց աջ ծոցը, պահեց, մի սանր էլ ձախ ծոցը պահեց:

Ե.

Մարամէլիքը լսեց, որ Աբամէլիքի տղէն հասակն առել է եւ վեր է կացել՝ գալիս է իւր վերայ կռիւ: Իւր կողմից էլ զօրք ժողովեց եւ խօլբաշուն յանձնեց: Սա վեր կացաւ, որ գայ Մարաթուկ Դաւիթի վրայ: Տեսաւ, որ ճանապարհի վրայ կանայք կանգնած, հետաքրքիր նայում են նրան եւ նրա զօրքին: Նա ասաց նոցա. «Ուրախացէ՛ք, պար եկէ՛ք մինչեւ իմ գալստ»:

Նոքա պատասխանեցին. «Մենք ի՞նչ ասենք եւ խաղանք. մենք չգիտենք՝ ի՞նչ ուրախութիւն պէտք է տեսնենք, որ այն ասենք ու երգենք»:

Խօլբաշին ասաց. «Անպիտաններ, դուք չէ՛ք իմանում, թէ շուտով պէտք է տեսնէք իմ յաղթութեան փառքը. ահա կարճիդ էլ, երկարիդ էլ սովորեցնեմ, թէ ինչպէ՞ս պէտք է գովէք ինձ, երբ ես փառքով վերադառնամ»:

Կարճ կնանիք երկան աղան,

Երկայնները ուղտեր բառնան.

Մեր Խօլբաշին կ'երթայ Սասուն,

Ամու եզներ բերէ լծան,

Կարմիր կովեր բերէ կթան.

կըգայ գարուն, կըգայ եւ մենք

Իւր ու չորթան շատ կըշինենք:

Մէկ էլ տեսաւ, որ կանայք սկսան այդ երգել եւ խաղալ: Իսկ ինքն առաւ զօրքն ու եկաւ մտաւ Մարաթուկի բակը, լցրեց:

* *

Այդ Մարաթուկի քահանայի աղջիկը Դաւթի հարսնացուն էր. նա եկաւ լուր բերեց Դաւթին եւ ասաց. «Դաւիթ, գլխիդ արեւիդ մատաղ, վեր կաց, տես, որքան զօրք է մտել բակի մէջ. անթի՛ւ զօրք է»: Աղջիկն ասաց ու գնաց եւ յետեւից դրան փակը քաշեց, որ ոչ ոք չիմանայ իւր արածը:

Դաւիթը թռաւ ելաւ, կանչեց. «Եւ, հաց գինի, Տէր կենդանի», եւ զօրքի մարդերին բռնեց, գլխները մարմնեց, ամենի դիակը գցեց պարսպից դուրս, գլուխը մնաց բակի մէջ: Խօլբաշուն էլ բռնեց, նրա ատամները հանեց եւ շարեց ճակատին եւ նիզակն էլ շան խառանի պէս շինելով՝ կախեց վզից, ինչպէս որ շան վզիցն են կապում եւ ասաց. «Դէ՛հ գնա, լուր տուր Մալամէլիքին, թէ էլի մարդ ունի՝ թող ժողովէ իւր կշտին, հիմա ես եմ գալիս նրա դէմ»:

Խօլբաշին այսպէս խայտառակուած էլի այն կանանց միջով անցաւ, որոնք իրանց խաղն ու խնդումը շարունակում էին: Բայց երբ որ նրան տեսան՝ նրանցից մէկը վերկացաւ եւ ասաց.

«Խօլբաշի, Խօլբաշի ջան,

Մեզնից գնացիր բանց գայլ գազան,

Հիմի եկար քանց շուն վազան.

Վիզդ է նիզակ քանց շան խառան,

Բերանդ է բաց քանց պատուհան,

Բերնիդ փրփուրն, ասես թէ թան,

ձանձեր ունի շարան-շարան»:

Խօլբաշու նեղը որ եկաւ՝ պատասխանեց.

«Տօ՛, անզգամ, լեզուդ կտրիր.

Հէնց գիտեմ թէ Սասուն դաշտ ու դուրան էր, Ջիմացայ թէ քարքարոտ ու կապան էր.

Այնտեղ մարդիկ չեն, այլ դուի զաւակներ,

Նետեր ունին քան ձիթահանքի գերաններ,

Մէկ որ խփեն՝ ճեղք կըճղեն-պատուհան.

Ինչ մարդ տարայ, դիփ էլ եղան հոգեհան:

Գարուն՝ որ ջուր ուռչի, դառնայ մեծ հեղեղ՝

Մեծ ու պստիկ շատ կըժողուէ միատեղ—

Այն ժամանակ ձեզ շատ շինէք չորթան, եղ:

* *

Այժմ Դաւիթն ինքը վեր կացաւ եւ գնաց Մալամէլիքի վրայ. այն ժամանակ եկաւ, երբ որ նա արդէն ահագին զօրք ժողովել, նստել էր Սեղանասարի գօտու վրայ. զօրքը բազմաթիւ սպիտակ վրանների մէջ էր ղետեղուած. նոցա մէջ ամենից մեծն ու երեւելին մէջ տեղի կարմիր վրանն էր: Դաւիթն ասաց. «Ուրիշ եմ գնում, որ մինչեւ կարմիր վրանի տակ եօթն օր բրնձի փլաւ չուտեմ, կուիւ չանեմ»:

Եւ այս ասելով՝ այդտեղից պտըտեց, արեւալատի կողմից համարձակ յարձակուեցաւ. եկաւ եւ վրանի դէմուդէմ՝ կանգնեց: Երբ որ այն զօրքը այս ձիաւորին տեսաւ՝ ահի մէջ բռնուեցաւ եւ վախեցաւ: Մէլիքը հարցրեց. «Դու ի՞նչ մարդ ես»:

— Ես արեւալրտոց թագաւորի տղան եմ, ասաց Դաւիթը, ձեզ օգնելու եմ՝ եկել:

Մէլիքը վրան զարկեց՝ եօթն օր միասին հաց կերան. ութերորդ օրը ելաւ Դաւիթն իւր ձին հեծաւ. երկու անգամ յետ ու առաջ չափ ձգեց, գնաց եկաւ, ասաց. «Վեր

կաց, ես եկել եմ քեզ հետ կռիւ անելու. մինչեւ երբ պէտք է իմ հօր կալուածքը ուտես»:

Մսլամէլիքը նոր իմացաւ, թէ ում հետ կերուխում արեց, գլուխը շարժեց եւ հրամայեց զօրքին, որ ոտքի կանգնի:

* *

Կռիւն սկսեցին: Դաւիթն իւր կարճ աղօթքն ասեց. «Հացն ու գինի, Տէր կենդանի»:

Այս ժամին Թորոսն էլ հասաւ: Նա լսել է սոցա կռիւը, մէկ բարտի ծառ քղբհհհհն է արել, ուսին է դրել եւ գալիս է. եկաւ ու կանգնեց ձորի գլխին, իսկ նոքա ձորի մէջ կռիւ են անում: Եթէ մէկը փախչել է ուղում եւ վեր է բարձրանում, Դաւիթը գոռում է. «Քեռի՛ Թորոս, դու ձորի՛ր, ես ձորթափեմ»: Նատին ջարդեցին, շատին կոտորեցին, զօրքը նուազեց:

Այս վերջին զօրքի մէջ տրտունջ ծագեցաւ. ոտքի կանգնեցին եւ բողոքեցին. «Եթէ գուք բաջեր էք, դուք պէտք է միայն երկուսովդ մենամարտէք, եւ յաղթութիւնը յաղթողին լինի»:

Երկու եղբայրները համոզուեցան այս խօսքով, տեսան որ մարդկանց իգուր կոտորում են: Եկան, կանգնեցին մէջտեղը. մէկն ասում է՝ «Դու նստիր, ես զարկեմ». միւսն ասում է՝ «Ձէ, դու նստիր»: Վերջապէս համաձայնուեցան, որ փոքր եղբայրը, Դաւիթը նստի:

Դաւիթը քաշեց վահանը գլխի վրայ, բռնեց Սուրբ Նշանը վահանի տակ ու նստաւ: Մսլամէլիքը երեք ժամի ճանապարհ հեռացաւ եւ այնտեղից շտապով եկաւ, զարկեց մի գուրզ ու ասաց. «Հոդ ես, հոդ դառնաս»: Իսկ Դաւիթը պատասխանեց. «Հաւատամ, խոստովանիմ, բարձր Մարա-

թուկի Ս. Նշան. քեզ պէս զօրաւոր պաշտպանի տակ ես այնպէս եմ իբրթէ կանաչ—կարմիր վրանի տակ նստած՝ հանգիստ բրնձի փլաւ եմ ուտում»: Մսլամէլիքն այսպէս երեք անգամ գնաց եկաւ, զարկեց ու ասաց. «Հոդ ես, հոդ դառնաս». Դաւիթն էլ երեք անգամ իւրը պատասխանեց:

* *

Այս անգամ նստելու կարգը Մսլամէլիքին եկաւ, բայց նա յամառեցաւ, կանգնեց եւ չուզեց նստիլ: Բոլոր զօրքը մեղադրեց նրան, թէ անօրէն է վարւում, այնպէս որ ամօթից վերջապէս եկաւ, վահանը բռնեց գլխին եւ նստաւ: Այս միջոցին Մսլամէլիքի մայրը Դաւիթն զրպարտել ուզեց եւ ասաց. «Դաւիթ, գլխիդ արեւիգ-մատաղ, չէ՞ որ դա քո եղբայրն է. մի՛ զարկիր, մեղք է»: Դաւիթի սիրտը շատ խոցուեցաւ եւ պատասխանեց. «Այ՛ անօրէն, ինչո՞ւ մինչեւ հիմա չէիր ասում, թէ քո եղբայրն է, երբ սա էր ինձ զարկում: Բայց թող քո խօսքը լինի. ես պէտք է երեք անգամ զարկէի՝ մէկ հարուածը նուիրում եմ Աստուծուն, մէկը բաշխում եմ քեզ, որ նրա մայրն ես. իսկ իմ բաժին միայն երրորդը պիտի զարկեմ,—կամ մեռնի կամ մնայ»:

Գնաց եկաւ Դաւիթն եւ իւր գուրզն այնպէս զարկեց, որ Մսլամէլիքին եօթն գաղ գետինն իջեցրեց: Եւ Մուսուլին տիրելով՝ նստեց Թագաւորական գահը:

Դա մնայ այդ տեղ:

Գ.

Դաւիթի քաջութիւնների համբաւը ամեն տեղ տարածուեցաւ: Կաղզուանի ամիրան մի աննման աղջիկ ունէր, անունը Խանդուգ խանում: Սա էլ լսելով Դաւիթի քաջա-

գործութիւնները, շատ ոսկի, արծաթ տուեց մէկ աշուղի եւ ասաց. «Դնա, իմ գովասանքն արա Դաւթին. ասա որ շատ իշխաններ են ուզում ինձ առնել, բայց միայն Դաւթին եմ ընտրել, նա պէտք է լինի իմ ամուսին. եթէ քո խաղը նրա սիրտը գրաւէ եւ նա գայ ու մենք իրար առնենք, այս ոսկին ու արծաթը քեզ վարձ լինի»:

Աշուղն առաւ իւր դամբուռը, ոսկու, արծաթի լարեր քաշեց վրէն, գնաց Սասուն իւր աննման խանութի գուլքը հռչակելու: Եկաւ, բարձրացաւ ծանփեգու բերդը, կարծելով թէ Դաւթին այն տեղ է նստած: Նստաւ եւ երգեց ծանփեգու խանութի գեղեցկութիւնն ու իմաստութիւնը:

Ծանփեգին այս լսելով՝ բարկացաւ եւ իւր պահապաններին հրամայեց. «Տղայք, վեր կացէք, ծեծեցէք սրան եւ դուրս արէք. դա եկել է, որ իմ եղբօրը խաբէ, տանէ»:

Խեղճ աշուղին ծեծեցին եւ տարան, ձգեցին ճանապարհի վրայ: Երեկոյեան հոտաղներն իրանց եզները հծած՝ գիւղն էին գալիս: Անցնելով այդտեղից, ուր աշուղն էր ձգուած, մէկի եզը խրտնեց եւ վրայի նստողը վայր ընկաւ: Նրան որոնելով՝ գտան եւ աշուղին: Աշուղը լաց եղաւ, աղաչեց, որ օգնեն եւ հարցրեց. «Այդ բերդի մէջ նստողն ո՞վ է»:

Նրանք պատասխանեցին. «Դա ծանփեգին է, իսկ նրա եղբայր Դաւթը այդտեղ չէ, այլ Մուսուլումն է»:

Աշուղը ոսկի հանեց, տուեց այդ հօտաղներին. նոքա ժողովեցին նրա դամբուռի կտորտանքը, տուեցին իրան եւ ճանապարհը ցոյց տուին:

Աշուղը գնաց Մուսուլ եւ Խանդուղ խանութի սիրտը յայտնեց Դաւթին: Դաւթը երկար լսեց նրա խաղը, շատ հաւանեց խանութի գուլքը, շատ պարգեւ տուեց աշուղին եւ ասաց. «Դու գնա, ես կրգամ»:

Աշուղը դարձաւ, բոլորը պատմեց խանութին:

Դաւթը Մուսուլից ճանապարհ ընկաւ եւ ուղղակի եկաւ Սասուն եւ այնտեղից Ծմակայ քիթը, ուր ճանապարհի վրայ մի գութան տեսաւ, արձակեց գութանի տաւարը եւ մէկ կողմ քշեց. իսկ ինքը շղթան ձեռքն առնելով՝ նստաւ ձին: Այս կողմից քաշում էր գութանը՝ հանում էր լերան գլուխը եւ այն կողմից քաշում՝ վայր էր բերում ցած: Եւ այսպէս Սեւ սարից գլխիվայր եկաւ մինչեւ Մառնիկ գիւղի գլուխը: Եկաւ տեսաւ, որ մի գոմէշ տղմից դուրս եկաւ եւ կանգնեց առաջը: Դաւթը, որ ամենեւին այդպիսի բան չէր տեսել՝ գուրգը ուղղեց, որ զարկի գոմէշին:

Այն կողմից մի հօտաղ դուրս եկաւ, որ գոմէշն հայհոյում էր: Դաւթը, կարծելով, թէ նա իրան է հայհոյում, ասաց. «Ո՛րդի, քեզ ի՞նչ եմ արել, որ ինձ հայհոյում ես»:

—Քեզ հետ ո՞վ է, եղբայր, պատասխանեց հօտաղը. դու Սասնոյ գոթերից հօ չես, որ աշխարհը չես տեսել. ես իմ գոմէշն եմ հայհոյում:

«Ո՛րդի, ինչո՞ւ ես նեղանում. ամօթ բան է միթէ. ես այդպիսի բան չեմ տեսել. մեղանում այդպիսի բանին չեն հայհոյում: Դրանից շատ կայ ձեր երկրում»:

Եւ նա ասաց. «Արի, քեզ ցոյց տամ»:

Դնացին դաշտը, ուր մի գութան էին լծել գոմէշներով եւ քաշում էին: Դաւթը տեսաւ, որ գոմէշները տապից լեզուները դուրս են հանել ու գութան են քաշում: Խղճաց նոցա, արձակեց գոմէշներն եւ տարաւ, լցրեց լիճը. իսկ մաճկալն անիծեց նրան:

«Մաճկալ, ասաց Դաւթը, ինձ մի անիծիր, այդ գութանի շղթան ինձ տուր»: Բռնեց շղթան, մաճկալը կանգնեց վրան եւ Դաւթը քաշեց գութանը իննը պոռոյտ տարաւ, բերաւ:

«Այդ բո հնարը չէ, ասաց մաճկալը, իջիր ձիուց եւ ապա քաշիր, տեսնենք քո շնորհքն է, թէ ձիունը»: Դաւթը

Թը ձիուց իջաւ, տասը պտոյտ էլ քաշեց առանց ձիու:

Այս անգամ մաճկալն ասաց. «Դաւիթ, քեզ մատաղ լինիմ: Կէս օր է, նստիր, հաց կեր եւ այնպէս գնա»:

— Զէ, կերթամ, ասաց նա, թող ձեր տղայքը հաց ուտեն. եթէ ես ուտեմ՝ նոցա էլ բան չի մնալ:

Վերջապէս նստաւ, եւ երբ որ հաց դրեցին, Դաւիթը բոլոր հացերը ժողովեց եւ միանգամից բերանը դրեց:

Հօտաղի բերանը բաց մնաց ու ասաց՝ «Նաման, վեր կացէք, փախէք, թէ չէ՝ դա մարդ էլ կուտէ»:

Դաւիթն ասաց, «Գութան քաշողն, իհարկէ, հաց կ'ուտէ, հապա ի՞նչ կ'անէ»: Եւ այդտեղից ճանապարհ ընկնելով՝ գնաց Խանդուղ խանութին:

Ի.

Դաւիթը գնաց-հասաւ Խանդուղ խանութի պալատի դուռը: Այդ այն պալատն է, ուր որ խանութի ուղողները գալիս են, իջեւանում են: Դռանը միշտ կանգնած է մի մարդ, որ ձեռին թոփուզ ունի: Դաւիթը հարցրեց նրանից. «Այ տղայ, անուշ ի՞նչ է»:

— Իմ անունս Գորգիղ է, պատասխանեց նա:

«Գորգիղ, ես Դաւիթն եմ, եկել եմ Խանդուղ խանութին ուզելու. քեզ շատ հաւանեցի, եւ երբ որ խանութին առնեմ, քեզ էլ ինձ քաւոր կ'անեմ»: Գորգիղը գլուխը շարժեց եւ ասաց. «Ուր է՝ որ մեր անմահ խանութը մարդ ուզէ. շատ քաջ մարդիկ են գալիս նրա ձեռքը խնդրելու, բայց ոչ որին չէ հաւանում, եւ միշտ ասում է, թէ իմ սրտի քաղն ուրիշն է»:

Դաւիթը հարցրեց. «Գորգիղ, ո՞վ կայ ներսը»:

— Նրբագան-Խորասական եւ Հրմզայ-Լօռայ մեծանուն իշխանների հարսնախօսներն են եկել, ասաց Գորգիղը:

«Իմ ձին դու քաշիր, կապիր, ասաց նրան Դաւիթը: Գորգիղը քաշեց, կապեց:

Յետոյ Դաւիթը հարցրեց. «Այդ ի՞նչ թոփուզ է, որ տուել են քո ձեռքդ, տուր տեսնեմ»: Եւ ձեռքից թոփուզն առնելով՝ ձգեց, որ մինչեւ այսօր դեռ էլի անվերջ գնում է: Գորգիղը նոր իմացաւ, թէ ի՞նչ մարդու է պատահել:

Դաւիթն ասաց. «Բաւոր Գորգիղ, այժմ ներս գնանք, կեր ու խում անենք»:

Ներս գնացին, ուր որ հարսնախօսները նստած էին: Դաւիթը նստաւ. յոգնած էր եւ քաղցած: Այն մարդիկն իմանալով՝ թէ Դաւիթն ով է եւ թէ ինչո՞ւ է եկել՝ ուզեցին նրան քնացնել եւ սպանել: Նոքա վերցնում էին մէկ-մէկ չլիզալ գինի եւ Դաւիթին էին տալիս. Դաւիթի ծարաւը չէր կոտրուում, վերջապէս էլ չհամբերելով՝ մի անգամից վերցրեց գինու տաշտը եւ բոլորը խմեց ու ասաց. «Ի՜նչ հիմի ասացէք՝ անուշ լինի»:

Բայց գինին Դաւիթի գլուխն ընկաւ եւ նրան տարաւ: Երբ որ Դաւիթն այսպէս է լինում եւ գինուց գլուխը խոնարհեցնում ու դնում է գետնի վրայ, այն մարդիկը հանում են իրանց թրերը, որ զարկեն, իսկ երբ որ Դաւիթը գլուխը վեր է բարձրացնում, նոքա թրերը դնում են ծնկների տակ: Միանգամ էլ որ այս կրկնուեցաւ՝ քաւոր Գորգիղը կանչեց. «Սանահայր Դաւիթ, այստեղս վնաստան է, Վրաստան չէ»:

Դաւիթը երբ որ այս լսեց, կանչեց. «Շուտ արա, դուռը բռնիր»:

Բայց մինչեւ Գորգիղը դուռը կրփակէր, այդ մարդիկն ելան, փախան, մէկ-մէկ ապտակ էլ տալով Գորգիղին:

Դաւիթը հա թէ հանգստացաւ:

Որ զարթեցաւ Դաւիթը, կանչեց Գորգիզին եւ հիմի հարցրեց. «Խանութիւն որտեղ տեսնենք»:

— Դարպասի բախչի մէջ, ասաց Գորգիզը. այսօր կիւրակի է, նա այնտեղ կրլինի. քսան նաժիշտներ նրա առաջից կրլինին եւ քսանն յետեւից. գնանք հեռուից տեսնելու:

Սովորութիւնն այնպէս է, որ Դաւիթն առաջ հօրը պէտք է տեսել էր. բայց նա ու Գորգիզը գնացին, կպան պարտիզի պատին եւ կանգնեցան: Նաժիշտները մէկ-մէկ եկան եւ անցան. եկաւ եւ Խանդուղ խանութը: Դաւիթը չհամբերեց մինչեւ հօր տեսութեանը, ձեռքը ձգեց խանութի վրին եւ երեք համբոյր առաւ նրանից: Խանութը այս անգամ քչինչ չխօսեցաւ. գիտէր որ իւր Դաւիթն է: Բայց Դաւիթը չորրորդեց համբոյրը: Այս անգամ Խանդուղը բռնեց Դաւիթի փողպատը, զարկեց նրան պատին եւ Դաւիթի քթից արիւն վազեց:

Դաւիթը ամեն տեսակ ցաւի կսկիծը կը տանէր, բայց նրա սիրտը շատ խոցուեցաւ, որ մէկ կին այսպէս անպատիւ արեց իրան: Սաստիկ բարկացաւ եւ այգտեղից դարձաւ, որ ձի նստէ, ուխտեց իւր ս. Նշանին եւ ասաց. «Քաւոր Գորգիզ, քաշիր ձիս, որ այս քաղաքն աւերեմ»:

Գորգիզը աղաչելով ասաց. Աստուած սիրես, հիմա թող մնայ, մութն է. լուսին վեր կաց, աւերիր, գնա»:

Դաւիթը թէեւ համբերեց, բայց մահճի մէջ պառկած ժամանակ բարկութիւնից չէր կարողանում քնել. սպասում էր, թէ երբ պէտք է լուսանայ, որ այս քաղաքն աւերէ եւ գնայ:

* *

Իսկ Խանդուղ խանութը դեռ էլի պարտիզի մէջ զբօսնում էր. կաղ նաժիշտն եկաւ եւ ասաց. «Ի՞նչ սեւ ժամին ես զբօսնում. ահա Դաւիթը պատրաստուում է քո պապական քաղաքն աւերել եւ գնալ»:

Գնացին հագնուեցան, կապեցին իրանց բոխչէն, քօղ

ծածկեցին եւ դարձան. եւ ուղղակի եկան իջեանի դուռը ծեծեցին, որ բանան:

Դաւիթը, որ նոր անոյշ քուէն էր մտել, ասաց. «Ո՛հ, հիւս, ինչ անամօթ են այս քաղաքացիք, մինչեւ առաւօտ չեն համբերում, ասում են՝ ել, աւիրիր եւ գնա»:

Գորգիզն դուրս եկաւ ահով պատշգամբը. բայց երբ որ եկողներին տեսաւ, հանդարտուեցաւ եւ ասաց. «Եկողներից վնաս չկայ, նոքա քոսն են»:

Դաւիթը հասկացաւ, որ եկողները կանայք են: Դուռը բացին:

Խանդուղն եկաւ իւր նաժիշտներով Դաւիթի մօտ եւ խօսեցաւ. «Դաւիթ, ասում են, որ դու բարկացել ես իմ վրայ, որ ես քեզ անպատուեցի: Բայց գիտես, թէ ինչու անպատուեցի: Դաւիթ, դու ինձանից մի համբոյր առար ուխտած՝ ճանապարհիդ համար, մէկն էլ առար քեզ համար, որ կտրիչ ես, երրորդն էլ՝ Աստուծոյ սիրոյն համար: Աւելի պագը ի՞նչ բանի համար առար: Եթէ դու քո հօր կտրիչն ես, ես էլ իմ հօր կտրիչն եմ: Ասած է՝ աղջկան ազատիր եղիգինների ձեռքիցն, որ տղին ասեմ՝ թէ տղայ-մարդ է: Դու որ ինձանից աւելի պագ ես առնում՝ միթէ Նրբըդան-Խորասական եւ Լօռայ-Հրմզայ հսկաների գլուխն արդէն բերել ես ինձ, որոնց հարսնախօսները միշտ գալիս են մեր տունը եւ ձանձրացնում են ինձ»:

Դաւիթն այս խօսքերից կակղեցաւ եւ ասաց. «Եթէ այդպէս է, լուսաբացին ես կերթամ, նոցա գլուխը կըբերեմ քեզ: Ես ամացի եւ կերթամ. բայց եթէ բախտս այնպէս կտրէ, որ նոքա ինձ յաղթեն եւ սպանեն, դու, եթէ սիրում ես քո Աստուծուն, արի իմ դիակը վնասուի, աջ թեւիս վերայ կայ մի մսէ խաչ. այս նշանով ճանաչիր, վեր առ, բեր թաղիր, բայց մի թող, որ նոքա այնտեղ անպատուեն մարմինս»:

Դաւիթը ճանապարհ ընկաւ գնաց:

* *

Շատ գնաց, քիչ գնաց, այն հսկաների աշխարհքին մօտեցաւ: Հսկաները տեսան, որ այնտեղից մի ձիաւոր է գալիս, ձիաւորի թողը երկինք է հասնում: Ասացին. «Այդ ձիաւորը կռուի համար է գալիս, միայն թէ չլինի, որ դա Արգոյի ճորտերիցն է»:

Երբ որ ձիաւորը մօտեցաւ, նոքա կանչեցին. «Այ մարդ, ո՞վ ես դու եւ ո՞րտեղից ես գալիս»: Նա պատասխան չտուեց եւ էլի մօտեցաւ: Նոքա էլի հարցրին. «Արգեօք Խանդուղ խանումին չե՞ս ճանաչում, չե՞ս կարող այս մատանին նրան հասցնել»:

— Լաւ ճանաչում եմ, պատասխանեց Դաւիթը, բայց ես ոչ թէ ձեր մատանին տանելու եմ եկել, այլ ձեր գլխուները պէտք է տանեմ նրան:

Դաւիթը տեսաւ, ի՞նչ հրէշներ տեսաւ, այդ Շրբբդան-Խորասականի վերին շուրթը այնքան էր կախուել, որ եկել, հասել էր սրտի վրայ, ուստի եւ չանգալով տարել էր թիկունքի վրայ կապել. իսկ միւս հսկայի—Լօռայ—Հրմզայի ներքեւի շուրթը գետինն էր աւելում:

Դաւիթն ու այդ երկու հրէշները իրար առան գուրդ ու վահանով եւ կռուեցին մի օր մինչեւ երեկոյ: Դաւիթը կանչեց. «Եւ, հաւատամ, խոստովանիմ, ով բարձր Մարաթուկի սուրբ Նշան, Յիսուս որդի, դու օգնական», եւ զարկելով երկուսի գլխներն եւս կտրեց, իրանց մաղերով մէկ-մէկու կապեց եւ խուրջինի նման ձիու գաւակին ձգեց. իսկ նոցա կախ ընկած լեզուները գետինը վարում էին, կարծես գութանն է ակօսներ քաշել:

Այդպէս գլուխները բերելով, ճանապարհի կէսն եկաւ: Տեսաւ, որ դիմացի կողմից մի ձիաւոր է գալիս երկնքի եւ գետնի մէջ կրակ թափելով, եւ ձայն տուեց Դաւիթին. «Ե՛, քանի դեռ ժամանակ ունիս, պատրաստուիր. մտքիդ չանցնես, թէ այժմ Շրբբդան-Խորասական, Լօռայ-Հրմզայ հրա-

կաների պէտքն ես պատահել»: Ասաց եւ անցաւ Դաւիթի թիկնակողմն ու մի գուրդ զարկեց: Դաւիթը ճարպիկութեամբ ծռուեցաւ, մի ոտքը հանեց ասպանդակից. գուրդը դիպաւ ձիու ասպանդակին, առաւ տարաւ գետին:

Դաւիթը մէկ անգամ էլ շիտկուեցաւ թամբի վրայ, ասաց. «Եւ, հաց ու գինի, Տէր կենդանի»: Գուրդը տարաւ որ գլխին տայ, բայց դիմացի կռուողը կուճ եկաւ, ծամերը թափեց նրա առաջ:

Դաւիթը տեսաւ եւ ճանաչեց, որ Խանդուղ խանումն էր, որ մարդի պէս փոխուած, դուրս էր եկել նրա դէմ:

Դաւիթն ասաց. «Այ չար անդգամ, սիրտս ասում է, որ մի գուրդ զարկեմ, քեզ գետնի տակ տանեմ: Երկրորդ անգամն է, որ ինձ խայտառակում ես»:

Բայց Դաւիթն այն Դաւիթն էր, Խանդուղն էլ իւր սիրած խանումն էր: Մէկ-մէկի առան եւ դարձան եկան Խանդուղի քաղաքը. կանչեցին Խանդուղի հօրը եւ Դաւիթն ասաց. «Քո աղջիկը չե՞ս տալ ինձ»:

Հայրն ասաց. «Թէ կառնես եւ կըմնաս այստեղ, կըտամ: Իսկ թէ պիտի առնես գնաս, չեմ տալ»:

— Կառնեմ, կըմնամ այստեղ եւ չեմ տանիլ, ասաց Դաւիթը:

Այս խօսքը երբ որ առան՝ բերեցին տուեցին. նոցա պսակն արեցին ու եօթն օր, եօթը գիշեր հարսանիք կատարեցին:

Ը.

Հարսանիքից մի ժամանակ որ անցաւ՝ Աստուած նոցա մի տղայ տուեց:

Դաւիթը տանը չէր: Երբ որ նրան իմաց արին՝ այնպէս ուրախացաւ, որ չէր էլ ուզում հաւատալ, թէ այդպէս բախտաւորուել է: Եկաւ եւ Խանդուղ խանումին ասաց. «Թէ-

որ այդ տղան իմն է, նրա վրայ մի նշան, մի զօրութիւն պիտի լինի: Ասաց եւ գնաց, մինչեւ որ պատասխան տանեն նրան:

Բերեցին տղային խանձարուր դրեցին եւ կապերի փոխանակ գութանի շղթայով փաթաթեցին տղային: Երբ որ տղան լաց եղաւ եւ ձգձգուեցաւ օրօրոցի մէջ, նրա վրայի շղթան կտոր կտոր եղաւ: Պատասխան գնաց Դաւիթն՝ թէ տղան լաւ տղայ է, շղթան կտրտեց. միայն մի ձեռքը արատաւոր է, խուփ արած է, եւ ոչ ոք չի կարողանում բանալ նրա ձեռքը:

Եկաւ Դաւիթը՝ նստեց եւ մանկան ձեռքը այնքան մաժեց, մինչեւ որ բացեց. տեսաւ որ ձեռքի մէջ արեան նիշ կար, ասաց. «Հայ-հայ, աշխարհքը մի կաթիլ արիւն է արել, դրել իւր ձեռքի մէջ. եթէ դա ողջ մնայ, զարմանալի բաներ պիտի դուրս գայ նրանից:

Բերեցին կնքեցին եւ անունը դրեցին Մհեր:

* *

Անցաւ մի ժամանակ. տղան մեծացաւ: Դաւիթը թողեց տղային Կաղզուան իւր պապի եւ մեծի մօտ, իսկ ինքը Խանդուղ խանութին առաւ, ճանապարհ ընկաւ, որ տանի Սասուն ու իւր ազգականներին ցոյց տայ, եւ այնտեղ էլ հարսանիքը տօնէ:

Բայց ճանապարհին շատ թշնամի ազգեր կային, նոցա հետ պէտք է կռուէին: Սյսպէս օրինակ՝ Խլաթցիք զօրք ժողովեցին ու պարիսպ կապեցին Դաւիթի դէմ եւ սայլերով պատուար շինեցին՝ կռիւ սկսեցին: Բայց միայն Դաւիթը չէր նոցա դէմ: Խանդուղը մղրախի կոթով զարկում էր, պարիսպը քանդում եւ սայլերը ձգում էր երկու ժամ ճանապարհի հեռաւորութեամբ. իսկ Դաւիթը կոտորում էր զօրքը եւ գնում էր առաջ:

Դաւիթը դարձաւ ասաց. «Խլաթցիք, դուք ինչ անպատկառ մարդ էք, որ մի հարսի դէմ էք կռուում. թէ պատիւ

կայ ձեր մէջ՝ թողէք հարսս տանեմ Սասուն, յետոյ գամ եւ կռուենք:

Նոքա թէեւ ամաչեցան, բայց չհաւատացին: «Որ այդպէս է, ասացին, ուրեմն երգուիր քո ծոցի Սուրբ Նշանով, որ հաւատանք»: Դաւիթն էլ ձեռքը տարաւ, որ իւր խելքով, սանդրի վրայ պիտի դնէր ու երգուէր, բայց ձեռքը դիպաւ Սուրբ Նշանին: Սուրբ Նշանի հնարն ու զօրութիւնն էլ այն էր, որ նրանով երբեք չպէտք էր երգուել էր:

Խլաթցիք ճանապարհ տուին: Դաւիթն առաւ Խանդուղին ու տարաւ Սասնոյ բերդը:

Ձեռքը տարաւ ծոցը եւ տեսաւ, որ Սուրբ Նշանն էր ընկել այն կողմը, որի վրայ ինքը երգուել էր, եւ ասաց. «Այսուհետեւ իմ բանը աջուկ չէ, թէ գնամ՝ զուր է եւ թէ չգնամ՝ դարձեալ զուր է: Բայց որ երգուել եմ, պիտի գնամ»:

* *

Վեր կացաւ, եկաւ կռիւ անելու: Կռիւն սկսեց, բայց Խլաթցիք նեղը լծեցին. նրա ձին խրուեցաւ մի շամբի տըղմերի մէջ. հազիւ հազ այդ տղմից ազատուելով՝ եկաւ ջրի մէջ լուացուեցաւ, որ ցեխից մաքրուի:

Այդ ջրի ափի փշերի մէջ մի չար աղջիկ էր կենում, որ ամեն լողացողի վրայ նետ էր արձակում եւ սպանում:

Երբ որ Դաւիթն էլ միամիտ լողանում էր, աղջիկը, դառնամուտ եղած, մի նետ զարկեց նրա թիկունքին: Դաւիթն զգաց, որ այս զարկը մահաբեր է, կանգնեց, գոռաց, ձայնը հասաւ Սասուն:

Դաւիթի ձայնը լսելով՝ Սասնոյ մէջ մէկ տեղ ժողովեցան՝ Զէնով Ովանը, Խոր Գուսանը, քեռի Թորոսը, ձնձղափոքրիկը, Յանվէգին: Զէնով Ովանը Սասնից կանչեց. «Դաւիթ, մենք գալիս ենք»: Եւ շտապով եկան Դաւիթին օգնու-

Թեան, որ արդէն ջրի մէջ լսել էր իւր եղբօր ձայնը: Նոքա հասան ջրի մօտ եւ գտան Դաւթին:

Զէնով Ուփան, ասաց Դաւիթը, ինձ վիրաւորողը մեր գոռալու ձայնն առնելով, անշուշտ երկիւղից կիսակենդան ընկած կըլինի. գնացէ՛ք, նրան գտէ՛ք, նրա դատաստանն է՛ւ անեմ, այնպէս մեռնեմ»:

Փնտռեցին, գտան, որ մէկ չինի աչքերով աղօթիկ է: Դաւիթը դրա ոտը ոտի վրայ դրեց, քաշեց ձրւոնց: Երբ որ այդ հրէշ աղօթիկն էլ չկար, մարդիկ եկան այդ կողմերը գիւղ շինեցին, անունը դրին Նըւտիս: Նըւտիան էլ յետոյ դառաւ ձապկիս, եւ այդ գիւղը այդ անունով մինչեւ այսօր կայ:

* *

Դաւիթն իւր սպանողին սպանեց, բայց ինքն էլ մահին էր մօտենում: Եղբայրներն ու քեռին առան Դաւթին, գնացին Սասուն: Զորս օրից յետոյ Դաւիթը մեռաւ:

Եղբայրները մեծ ալմուկով վերջապէս իրանց մէջ վրձուեցին, թէ Խանդուղին որքան հարսնամաս տան իրանց կալուածքներից եւ գնացին նրան սփոփելու եւ ողջութիւն ասացին: Իսկ խանումը անմխիթար ասաց. «Հէյ... Դաւթից յետոյ ես սոցա ձեռքին պէտք է նայեմ եւ սրանց առակը պէտք է լինիմ»:

Եղբայրներն եկան մէկ-մէկ եւ ասացին.

«Խանդուղ խանում, քո սեւ սուգը մի հագնիր,

Դաւիթ մեռաւ, ես փոխարէն. ողջ եղիր»:

Խանդուղը երբ որ այս լսեց, ասաց. «Գնացէ՛ք դուրս, իմ պատասխանն այնտեղից դուք կը լսէք»: Նոքա դուրս գնացին, իջան ներքեւ, իսկ ինքը վեր ելաւ բերդի գլուխը. եւ այնտեղից մագերը փետելով՝ գետին գլորեց իրան: — Նրա գլուխը դիպաւ մի քարի եւ ծակեց քարը. այդ քարի մէջ

լցնում են Սասնոյ կէս չափ կորեկ եւ ծեծում են սանդի տեղ: Խանդուղի եօթնաձիւղ ծածի տեղը դեռ մինչեւ այսօր երեւում է: Եւ այժմ էլ այդ սանդը այն տեղ է, բերդի առաջ:

Թ.

Հաւաքուեցան Դաւթի եղբայրները Խանդուղ խանումի վրայ, ձեռք տուեցին ծծերին, տեսան որ կաթ կար, որովհետեւ երեխայ կար:

Ժողովուեցան միասին եւ ասացին. «Դուցէ ինչ որ եղել է, այնտեղ է եղել»: Եւ գնացին հասան Կաղզուան եւ տեղի Նըստողին ասացին. «Մեր եղբօրն ու հարսին այստեղ երեխայ է եղել, ո՛ւր է»:

— Ոչինչ չկայ, նոքա պատասխանեցին:

«Մեզ նշան կայ, ասացին Դաւթի եղբարքը. մեր հարսի ծծերում կաթ կար»:

— Մի աղօթիկ է եղել նրանից եւ մեռել է, պատասխանեցին միւսները: Բայց սուտ էին ասում: Իրանք գետնի տակին մի այր էին փորել, Մհերին դրել էին այդ այրի մէջ եւ նրա վրայ պահապան էին կարգել:

«Մեր մեռելներին էլ նշան կայ, ասացին Դաւթի եղբայրները. մեր մի տարեկանը մեր կէս հասակն ունի, իսկ երկու տարեկանը երկու, եւ այլն»: Եւ գնալով գերեզմանները նայեցին եւ տեսան, որ իրանց նշանով գերեզման չկայ:

Զէնով Ուփանն ասաց. «Կաշիներ բերէ՛ք, ինձ փաթաթեցէ՛ք, գոռամ, որ մեր տղէն իմանայ»:

* *

Զէնով Ուփանին փաթաթեցին կաշիով եւ նա գոռաց: Մհերը նրա ձայնը ճանաչեց եւ կամենում էր դուրս գալ,

բայց նրա պահապանն ասաց. «Այդ ձեր ազգի ձայնը չէ, այլ երեխայք թմբուկ են զարկում»: Բայց Մհերը, երբ որ երեք անգամ ձայնը հասկացաւ, դռները կոտորեց եւ դուրս եկաւ: Դուռը դռանը կոտորեց. առաջին դռանը քացի զարկելով՝ նա գնաց դիպաւ երկրորդ դռանը, երկրորդն երրորդին, եւ այսպէս եօթը դռներն էլ ջարդեց, դուրս եկաւ:

Տեսաւ, իւր հօրեղբայրներն այգտեղ են, հայրն այգտեղ չէ: Հարցրեց նրանց եւ իմացաւ, որ խլաթցիք սպանել են նրան: Լաց եղաւ եւ երեսի վրայ գետինն ընկաւ: Հօրեղբայրները թափուեցան վրան եւ ինչ որ արեցին, չկարողացան բարձրացնել: Մհերի արտասուքը գետինը ողողեց եւ գնաց:

Երեք օրից յետոյ հազիւ ուղղուեցաւ Մհերը: Հեծաւ հօր քուռակը եւ գնաց Խլաթ, քարուքանդ արեց: Քանի որ այսպէս աւերում էր, բարձրանում էր նեմրութի գլուխը. եւ եթէ այնտեղ տեսնում էր, որ մի երգիկից դեռ էլի ծուխ է բարձրանում, միւս անգամ դառնում էր, ջնջում էր: Ամենից վերջը տեսաւ, որ մի պառաւ էր մնացել, նրան էլ չխնայեց, ասելով. «Թէեւ հոգուս մեղք եմ անում, բայց իմ հօր սպանողի ծուխն ու մուխը պէտք է կտրեմ», եւ կտրեց:

Այգտեղ հրաժեշտ առաւ հօրեղբայրներից. նոքա դարձան իրանց տեղը, իսկ ինքը գնաց Տօսպայ բլուրը. ասում են, որ մինչեւ այժմ էլ այնտեղ է, եւ մինչեւ այժմ նրա ձին տեսնում են, որի վրայ նստած պատրաստ կայ, որ գայ եւ աշխարհքը չար լծից ազատէ:

Ժ.

Համբարձման գիշերը Մհերի այրի դուռը բացւում է, բայց հրաման չկայ, որ նա դուրս գայ. գետինը նրան չի վերցնի. ոտքերը կը մխուխն գետնին:

Մի օր Համբարձման գիշերը մի նախրորդ տեսնում է,

որ Մհերի դուռը բացւում է. նախրորդը մտնում է ներս: Մհերը դրանից հարցնում է. «Դուք ինչու էք ուտում աշխարհքը»:

Նա էլ պատասխանում է. «Խելքով»:

— Հէյ, հէյ, մէկ էլ ասաց Մհերը, մեր ժամանակ լաւ էր, մենք ուժով էինք վայելում աշխարհքի բարութիւնը:

Հիմա նախրորդը հարցրեց. «Մհեր, դու երբ պէտք է դուրս գաս այդ տեղից»:

Նա էլ սրան. «Երբ որ ցորենը լինի սալորի չափ եւ գարին մասուրի չափ եւ ամենայն բան իմ ուժի չափին հասնի, այն ժամանակ միայն հրաման կայ, որ այս վիճակից դուրս գամ»:

Դեռ մինչեւ այժմ աշխարհքը Մհերից բաժանուած է մի դռնով:

ՏՈՀՄԱԿԱՆ ԱՂԻԻՍԱԿ

Բաղդադի Խալիֆայ Գերի աղջիկ
(կռապաշտ) (խաչապաշտ)

1. Կապուտկողի 2. Մուսուլի Սբամէլիք Սանասար
Թագաւոր. Թագաւորի կին

1. աղջիկ

1. Մսլամէլիք

2. Յանվէգի, Յէնով Ուլան, Խոր- Կաղզուանի Թագաւոր
գուսան, Ննճղափոքրիկ, Դաւիթ. Խանդուգ

Մհեր

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂԻԻՍԱԿ

Սենեքէրիմ՝ Քրիստոսի ծննդից շատ առաջ էր,
կռապաշտ էր. այն ժամանակ Հայերն էլ կռապաշտ էին.
Ս. Կարապետը չկար:

Բաղդադի Խալիֆները՝ Քրիստոսի Ծնունդից յետոյ, ոչ թէ կռապաշտ, այլ մահճակաւաններ էին:

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ Ք

Սուրբ Կարապետ.

Շատ Հայեր եօթը շաբաթ պառ են պահում եւ եօթը տարի շարունակ այդ կրկնում են, որպէսզի Սուրբ Կարապետն իրանց խնդրածը, իրանց մուրադը, կատարէ: Մեր աշուղները շատ երգեր ունին շինած եւ մեր ժողովրդի մէջ էլ շատ աւանդութիւններ են պատմում Ս. Կարապետի մասին: Ահա մի քանի կտոր այդ երգերից եւ աւանդութիւններից.

I

Սուրբ Կարապետ կանգնեց յուսով,
Գետ Յորդանան լցուեց լուսով.
Քրիստոս քո գիրկ մկրտեցին,
Մուրազկատար Սուրբ Կարապետ:

II

Դու աղա ես, դու վեղիր ես,
Ամեն սրբոց գլխաւոր ես,
Մարիամ Կուսին դու քաւոր ես,
Մաքուր քաւոր Ս. Կարապետ:

III

Սուրբ Կարապետ գլխատեցին,
Ղայտար քաղբէն որ հանեցին,
Մարմին զաթրին որ բարձեցին,
Մշու սարի մէջ թաղեցին:

Սուրբ Կարապետի գերեզմանի վրայ Լուսաւորիչը մի եկեղեցի կանգնեցրեց, որ Հայերի մեծ ուխտատեղի է:— Ուխտաւորը հեռուից տեսնում է անտառախիտ մի լեռու, որ կարծես թէ մի մեծ գլուխ է մազերով. դա է «Մշու ծամը», որի վրայ եկեղեցին է շինած:

Չորս բոլորը մեծ դաշտ է,

Չորս բոլորը Հայու ցեղ է,

Բարձր գմբէթն անոյշ տեղ է:

Երբ որ «Մշու ծամը», ամպեր կանգնած, մառախուղով է ծածկում, Ս. Կարապետը դիւան է անում. ամենի դարդին դարման ու դեղ է անում:

Ս. Կարապետ բարձր է բոլոր,

Ճամպէք ունի ուր-մոլոր,

Կերթայ կը գայ շատ ուխտաւոր,

Թէ ձիաւոր, թէ ոտաւոր:

Մուրազ կըտայ ոտաւորին,

Ղուղաք կըտայ ձիաւորին:

Խցեր ունի անթիւ, անդար,

Միշտ անպակաս մէջը հիւրեր.

Խնաղբիւրն է անմահական,

Տակի ջաղացք խիտ հրաշական,

Փուռն օջախ Ս. Կարապետի,

Միահատիկ սաղ աշխարհքի:

Ս. Կարապետը բոլոր գեւերին յաղթեց եւ ծառայ շինեց: Կաղ դեւն ամենայն օր վառուած կրակների մոխիրը շալակում է եւ գետնի տակով տանում, հեռու թափում այնտեղ, ուր որ Փրէքաթման անունով մեծ բլուր է ձեւացրել: Այդ կաղն է Ս. Կարապետի փոշեհան, մինչեւ Քրիստոս գայ դատաստան:

Աշխարհ ժողովան, եկան քո տես,

Լոյս կը փայլէր քո սուրբ երես.

Ամեն աղքատ մարդու տէր ես,

Դարդի դարման Ս. Կարապետ.

Ծառայ կ'ընեմ քո շնորհքին,

Շնորհք տուող ամեն աշղին,

Մուրազատու Ս. Կարապետ:

Երգ շինականաց *)

Լուսնակն անուշ, հովն անուշ,

Շինականի քունն անուշ.

Ծագեց Լուսնակն երկրնուց,

Հովրի փողն էր անուշ.

Հօտաղն եղներ կ'արածէ.

Մաճկալ պառկեր, քունն անուշ.

Զրդզրդուն քամին կըփչէ,

Ծովային հովն էր անուշ.

Դաշտեր ձորեր մընջեր են,

Ջրեր գլգլան՝ ձէնն անուշ.

Հաւքեր թառան իրենց բուն,

Բըլբուլի տաղն էր անուշ.

Անմահական հոտ բուրէր,

Քեաֆուր վարդի հոտն անուշ:

*) Այս երգը արտասպում ենք «Նահապետական և Հայրենի Աշխարհից», որով միանգամ ընդ միշտ յայտնում ենք, թէ այնտեղ շատ կան այնպիսի դիւրմբունիկ յօգուածներ, որոնք կարող են երկրորդ տարեշրջանում եւ կարգացուիլ, եթէ ուսուցիչը այդ հարկաւոր համարէ և չբաւականանայ այստեղ մատուցած նիւթի քանակութեամբ:

Նաւակոծեալը Վանայ ծովի մէջ.

Նաւով Աղթամարայ ելանք,
Դէպ Աւանուց ճամբան ընկանք.
Ոստանայ դէմ երբ մենք հասանք,
Սեւ օրուայ սեւ արեւ տեսանք:
Թուխ ամպեր երկինք պտտեցին,
Աստղ ու լուսնակը ծածկեցին,
Պինդ - պինդ քամիներ փչեցին,
Ափ դամաք աչքէս խլեցին:
Գոռաց երկինք, գոռաց գետին,
Խռովեցաւ ջուր կապուտ ծովին,
Չորս կողմից կրակտեց երկին,
Սեւ սարսափ իջաւ իմ սրտին:
Երկինք կայ՝ գետին չերեւայ,
Գետին կայ՝ երկինք չերեւայ.
Սարի պէս ալիքներ կըգայ,
Խոր տնդունդ առջեւս կըբանայ:
Ծով, դու թէ Աստուած կըսիրես,
Խեղճ անճարիս մի գովթ անես,
Ինձ քաղցր արեւէս չհանես,
Քարէսիրտ մահին չմատնես:
Աման ծովեր, ահեղ ծովեր,
Ինձ մի տանիք պաղի հովեր,
Ձեզ կաղաչեն իմ արցունքներ
Ու սրտիս հազար բիւր դաւեր:
Ծով գազանն իսկի ողորմ՝ չունի,
Պըլած սրտիս ձէնիկ չլսի.
Սրիւն երակներս կըպաղի,
Սեւ գիշեր աչքերս կիծնի:

Գնացէք, ասէք իմ ծնողին,
Թող նստի լայ իր սեւ որդին.
Թէ Հանէս կուր եղաւ ծովին,
Թռաւ, գընաց արեւ կտրըչին:

Օրիորդի սև օրը.

Էս օր աստղըդ թռաւ, կորաւ,
Լոյս արեւդ խաւարեցաւ.
Մեծ իշխանն քեզ տուել է
Թաթար խանին՝ հետըն տանէ.
Վայ իմ գըլխիս, վայ քեզ, Շուշան,
Գերի գնացիր Թաթարստան.
Լոյս հաւատքըդ պէտք է մոռնաս,
Մահամէդի կրօնքին դառնաս:
Խեղճիկ, էս էր քո արժանին,
Որ դու լինիս կին Թաթարին.
Դու պէտք էիր լինիլ տիկին,
Տիկնանց տիկին մեծ իշխանին,
Եւ ոչ էսպէս անօրինին
Ձեռը կապած լինիլ գերին:
Վաթսուն տարի եմ ձեր դըրան,
Հէրդ պապերդ են իմ կըռան
Ծընած, սընած, իշխան եղած,
Էսպէս մին ցաւ ես չեմ տեսած.
Ականջդ բաց, լըսէ խրատիս,
Մըլքիդ պահես էս պառաւիս.
Ուր որ գընաս, ինչ տեղ լինիս,
Հաստատ մընաս լոյս հաւատիս:
Չմոռանաս, Հայոց ազգիս,

Միշտ հանապաղ նորան օգնես,
Ամենայն ժամ միտքըդ ձրգես,
Հայրենեացդ պիտոյ լինիս:
Է՛հ, Տէր ընդ քեզ, գընաս բարեւ,
Քրիստոս պահէ քո լոյս արեւ:

Տաղ վասն օտարութեան.

Վայրի հաւիկ մի եմ, բռնած ու բերած դրած զիս ի նեղ
զընդան.
Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ
երամ:
Սրտաբեկեալ եմ, միջակոտոր, ճար չունիմ, զի՛նչ լինիմ
գերիս:
Եթէ զբուրուլն ու տատրակ բերեն ինձ երգասաց գուտան,
չուրախանամ:
Եթէ հազար գոյնզգոյն փետուրներ ինձ բերեն խալաթ
տան, չուրախանամ:
Եթէ զշաքարն ի Մազաճու բերեն, կերակուր ինձ տան,
չուրախանամ:
Եթէ հազար թախտի հուքմն ինձ տան ու հարիւր հազարի
տէր առնեն, չուրախանամ:
Եթէ բիւր բիւրոց ինձ ծառայ բերեն, անհամար հեծեալ
ձիաւոր, չուրախանամ:
Եթէ դարպաս ինձ շինեն, ոսկուով զարդարած, անգին մար-
գարտով, չուրախանամ:
Իսկ եթէ հնար ճարակ լինէր ինձ երես ի նեղ զնդանէս,
Եթէ լինէր որ թռչէի, բարձրանայի, տեսնէի զիմ երամս,
Խաղալով, ճախրելով ու կանչելով խառնիլ յիմ երամս,
Յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելոյս,
Յայնժամ խառնէի յընկերացս երամ:

Տաղ վասն մահուան.

Քանի՛ դատիս հետ մեղաց,
Է՛յ անդգամ մարդ կատաղած,
Զայնչափ չարիք որ գործեցիր,
Հերիք արա՛, դարձիր մեղաց:
Ի Յադամայ մինչեւ այս օր
Շունչ կենդանի զերծ չըմնաց,
Քիտեմ՝ չըլես խրատու գրոց՝
Մեղաւորաց թէ կայ պահած:
Ով որ ունի բերդ ու քաղաք,
Դարպաս ունի ոսկով ծեփած,
Յետոյ եթող զամէնն անտէր,
Ներքեւ հողուն է նա պառկած:
Ով որ խմէր զանոյշ գինին,
Զինքն բրտէր քան զխող ուռած,
Տեսայ զնա խիստ ատելի,
Զանուշահոտ գէշ մի ձգած:
Ով որ հեծնուր ձի բարձրավիզ
Ու թուր քաշէր ամեն դիհաց,
Տեսի զնա խիստ փոշիման,
Երկու փայտի մէջ էր պառկած:
Է Յովհաննէս Թուլգուրանցի,
Սրտի մտօք զականջդ բաց,
Ատէն արա՛ քեզ ճար շուտով,
Անդէն առնուս պըսակ փառաց:

Բաղդադ.

Կար ժամանակ, երբ որ Արաբները աշխարհքի կէսը տիրել էին: Այն ժամանակ նոքա մեծ ազգ էին: Մահմեդականութիւնը նոքա տարածեցին: Դոցա ամենահռչակաւոր քաղաքներից մէկն էր Բաղդադը, որ Տիգրիս գետի վրայ է շինած: Մանաւանդ Խալիֆ-Հարուն-ալ-Ռաշիդի ժամանակ այդ քաղաքը շատ պայծառացաւ, հարստացաւ. այն ժամանակուայ ամենամեծ ուսումն ու գիտութիւնը այդ տեղ էր: Նա այժմ էլ կայ, բայց հին շքեղ քաղաքից մնացել է միայն մի քանի մինարէտներ, պարիսպներ, աշտարակներ եւ դռներ: Երեւելի են նրա միջի արմաւենիներն ու պարտէզները: Տները դրսից անշուք են, բայց ներսից բազկացած են մի քանի գաւիթներից, իւրաքանչիւր գաւիթը պատշգամբներով եւ բնակարաններով: Ունի լաւ բազար եւ արեւելեան ապրանքների մեծ առուտուր: Բաղդադի ուղտերը եւ մանաւանդ կայտառ սպիտակ էշերը՝ ամենայն տեղ գոված են:

Որքան որ մեծ էր երբեմն այդ քաղաքի եւ միջի նըստած խալիֆաների համբաւը, ինքը քաղաքն էլ մեծամեծ պատուհասներ կրեց: Երկու անգամ ամենասարսափելի ժանտախտ մտել է դրա մէջ՝ օրէնը 4000 մարդ զոհ առնելով: Մարախի բուն հայրենիքը դա է: Շատ անգամ զարհուրելի սով է եղել. մի անգամ էլ Տիգրիսն այնպէս սաստիկ վարարեցաւ, որ մէկ գիշերում 7000 տուն եւ 15,000 մարդ կուլ տուեց: Եւ այսպէս մի անգամ գոռոզ Բաղդադը հասարակ քաղաքների շարքն է անցել:

Քաղաքն այժմ տաճիկների ձեռին է, ինչպէս եւ Մուշն ու Ս. Կարապետը:

(Բաղդադի խալիֆաները միշտ մահմեդական են եղել,

եւ ոչ թէ կռապաշտ. իսկ Սենեքերիմ, Ասորեստանեայց թագաւորը, իրօք կռապաշտ էր, բայց նրա ժամանակ Բաղդադը չկար):

Սենեքերիմ և նրա որդիքը.

Մեր հին պատմութիւններում գրած է, թէ Քրիստոսից հազարաւոր տարի առաջ, երբ ոչ Ս. Կարապետ կար եւ Հայերն էլ դեռ քրիստոնեայ չէին՝ կար Ասորոց թագաւորութիւն: Ասորոց Սենեքերիմ արքան իւր Ադրամէլէք եւ Սանասար որդոց ուղում էր կռուքին զսՀ մատուցանել, սոքա էլ իրանց հօրը զոհեցին եւ փախչելով եկան Հայաստան՝ մեր Սկայորդի թագաւորի ժամանակ: Նրանցից ծագեցաւ Հայոց երեւելի նախարարութիւններից մէկը, այն է՝ Արծրունեաց նախարարութիւնը, որ Հայաստանի կառավարիչներից շատ պատիւ ստացան եւ իրանք ու իրանց սերունդն էլ շատ ծառայութիւն եւ քաջութիւն արեցին: Նոքա բնակեցան Վանայ ծովի հարաւային ափերում եւ Սասնոյ գաւառի շինութիւնն ու սկզբնաւորութիւնը դրանց ձեռքով կատարուեցաւ:

Գուռգուռայ Աստղիկի լոգարանը.

Եփրատը երբ որ մտնում է Մշոյ դաշտը եւ Կինճայու ձապաղ ջրի սարերի ու ձորերի քարերին է դիպչում՝ մի նեղ կրճով շատ սեղմուելով գճւռ գճւռ ձայն է արձակում: Այդտեղը կոչում է Գուռգուռայ, ուր հին Հայերի դիցուհի Աստղիկի լոգարանն է եղել: Այդ դիցուհին գիշերները սովորութիւն է ունեցել լուացուելու: Շատ երիտասարդներ, բարձր սարերի վրայ մեծ կրակ էին վառում, որ նրա լուսով Աստղիկի չքնաղ գեղեցկութիւնը տեսնէին: Դիցուհին երի-

առասարգների յանդգնութեան չհամբերելով՝ մշուշով պատեց չորս կողմը, որ դաշտի մէկ ծայրից սկսած մինչեւ միւս ծայրը, թէ ամառ եւ թէ ձմեռ, մինչեւ սարերի գլուխը այնպէս բռնուում է, որ անհնարին է լինում որեւիցէ կողմի լեռներից տեսնուիլը։ Ահա այս թանձր եւ շարունակ մշուշից ծածկուած լինելու պատճառով այդ դաշտը կոչւում է Մշու դաշտ։

Մշու սարեր մշուշ է,
Իւր հողն ու ջուրն անուշ է։

Մշոյ աշխարհ կամ Տարօն.

Մշոյ աշխարհի ժողովուրդը միշտ նշանաւոր է եղել իւր քաջութեամբ։ Կրօնասիրութիւնն էլ այստեղի Հայոց սեպհական ձիրքն էր. քանի որ ժողովուրդը կռապաշտ էր քուրմերը մեծ պատերազմ տուին Տրդատի եւ Լուսաւորչի դէմ, իսկ երբ որ ճշմարիտ աստուածապաշտ դառաւ՝ այն ժամանակ էլ Վարդանի եւ իւր նմանների առաջնորդութեամբ սաստիկ կռիւ տուեց Պարսից մոգակրօնութեան դէմ։

Մամիկոնեանց մեծ նախարարութիւնն էր այս աշխարհի տէրը։

Մշոյ Հայերը պէտք է քաջ լինին, որովհետեւ իրանց Հայրենիքը զարմանալի դիրք ունի։ Այն ամենի բարձրաբերձ լեռները, որով նոքա պատած են, սրտին էլ համարձակութիւն պէտք է ազդէին. անտառներով, մացառներով զարդարած գագաթներն ու ծոցերը, նոյնպէս եւ շամբերը, որոնց մէջ գազանները լիքն են, ստիպում էին իրանց, որ զէնքի վարժուին՝ թէ որսալու եւ թէ պաշտպանուելու համար։ Այս ընդարձակ դաշտը եւ այն մեծատարած երկինքը վեհութիւն եւ վսեմութիւն էին ազդում նոցա հոգուն, եւ այն պատուական կլիման արդէն զօրաւոր եւ յաղթանդամ էր կազմում նոցա մարմինը։

Ջրերը բոլորն էլ գետեր են, որ չորս կողմի լեռներից սուր ընթացքով եւ գոռուն գոչուն ձայնով վազում՝ թափւում են Եփրատի ծոցը, եւ թէպէտ Մեղրագետն ու Եփրատը անձայն են ընթանում, բայց անցնում են այնպէս արագ, այնպէս ահարկու եւ լայնածաւալ պտոյտներով ու հոսանքներով, որ կարծես մի ահեղ թագաւոր է Եփրատը եւ նրա սպարապետն է Մեղրագետը, որոնք ջրային զօրքերի մի մեծ քանակ հետն առած՝ գաւառներին տիրելով՝ գնում են կռուելու ուրիշ տիրապետողների հետ։ Այսպիսի մի երկիր որքան որ իւր բնակիչներին ոյժ է տուել, այնքան էլ օտարների նախանձն է շարժել, եւ այս պատճառով Մշեցիք գրեթէ շարունակ կռուի մէջ ծնած եւ մեծացած լինելով՝ մահից չվախեցող մարդիկ էին։

Մշոյ աշխարհը լիքն է եղել բանաստեղծներով, երգասացներով. բազմաթիւ աշուղների տեղ է եղել այս երկիրը, որովհետեւ այնքան քաջերի եւ քաջագործութիւնների, համբաւը բերանէ բերան աւանդւում էր եւ նոցա յիշատակը ամենի սրտում կենդանի էր։

Այսքան գեղեցիկ է Մշոյ աշխարհը, որ տեսնողի սիրտը թրթռում է, արիւնը եռում եւ հոգին բարձրանում։

Բայց այսօր այս նշաններն ազգային չեն. Մշոյ քաջերը Հայեր չեն, այլ Քրդեր են եւ երգերն ու խաղերն էլ քրդերէն լեզուով են։ Շատ Քրդին որ հարցնես իւր ծագումը, կասի. «Մենք Հայ ենք եղել եւ մեր ազատութեան համար զէնքը չձգեցինք, հաւատքը փոխեցինք»։

Մշոյ դաշտի մէկ կողմը Սամնոյ քաջաբեր լեռներն են, Տօրոսի շղթան։ Միւս կողմը Բզնունեաց (Վանայ) ծովը ծիծաղախիտ ծածանում է։ Մէկ կողմն էլ Բիւրակնեան (Բինգէօլի) լերինքը եւ նոցա գօտիներն են, անմահացուցիչ ջրերով եւ ծաղիկներով զարդարուած։

Դաշտի մէջ եփրատէսը խշշալով խոխոջալով Գրգուռից ցած հոսում է մէկ կողմ. իւր խոր ծոցի մէջ անթիւ ձկներ կայտառում եւ խաղում են. բազն ու սագը իւր ալիքների վրայ ծփում են. իւր գետափունքները լիքն են խոշոր եւ մանրիկ թռչուններով:

Արագիլը ամեն գիւղի տների երդիկը եւ բարձր շէնքերի, պարիսպների եւ ծառերի գլուխը իւր բոյնն է դրել եւ հազարաւոր ճնճղուկները նոցա բոյների շուրջը ապաւինել են: Դաշտի խոտերի մէջ բուսած եւ ձորերի մէջ ծաղկած վարդի թփերի մէջ սոխակները ճըլլըլում են. գարնան, ամառուայ եւ աշնան առաւօտները այնպէս սքանչելի տեսարան եւ լսարան են կազմում այս թռչունների երամները, որ ասես թէ բնութեան տաճարի մէջ Արարչի փառաբանիչ են կարգուած սրանք հրեշտակների տեղ:

Արեւելեան կողմից Գրգուռ լեռը կոթողաձեւ տնկուած է երեւում, որի ստորոտը տարածուած է մէկ կողմը Մշոյ դաշտը, միւս կողմը Վանայ ծովը: Առաւօտեան, արեգակը երբ որ նոր ծագում է եւ իւր ճառագայթները խփում է ծովի ալիքների եւ դաշտի գոլորշիների վրայ՝ մի կանաչ կարմիր մանեկաձեւ պսակ է ձգում այս Գրգուռի կլորակ եւ մերկ գլխի վերայ: Նրան նայողը զմայլում է:

Գրգուռի թիկունքից վեր է բարձրանում Նէմրութ կամ Նեբրովթ լեռը, որի գլուխը նման է մի բոլորակ սեղանի, մէջտեղը հրաբուխի մարմրութիւն է, իսկ շուրջը պսակաձեւ շարուած բարեհամ աղբիւրներ եւ անուշահոտ ծաղիկներ: Այս Նեբրովթ լեռը իւր ճակատից կախած ունի Բելայ գիակը «ի տեսիլ կանանց եւ որդւոց եւ ի նշան յաղթանակի մեր Հայկին»:

Մշոյ դաշտի միւս կողմի լեռների վրայ բարձրացած են գմբէթայարկ վանքերը՝ Ս. Առաքելոց վանք, Ս. Յովհաննու վանք եւ Ս. Կարապետինը, որոնց ամպամած եւ արեւով

ոսկեզօծուած կաթուղիկէների խաչերն ամեն կողմից հովանի են սփռում դաշտի հարիւրաւոր գիւղերի վրայ եւ ամենի սիրտը քաշում են իրանց մօտ:

Յասման Խաչ.

Սովորութիւն կայ Հայոց մէջ, որ կամ առհասարակ գիւղացիք միանալով, կամ մի իշխան միայն իւր քսակով ծախս են անում եւ մի խաչաքար են կանգնեցնում. օծել են տալիս մեծ հանդիսով այդ քարի վրայ քանդակուած խաչը եւ իրանց գիւղի պահպանութեան համար թողնում են: Մեծ հացկերոյթ են կազմում, եզներ են մորթում, հարիսայ կամ մատաղի միս են եփում, անխտիր բոլոր հասարակութեան ուտեցնում են: Այս բարեպաշտական սովորութիւնը մինչեւ այս օրս էլ պահուած կայ Հայոց մէջ: Իսկ Յասման Խաչ անուն տալու պատճառն էլ այն է, որ երբ տարածւած ձիւն կամ կարկուտ տեղայ, բերքերին վնասէ, երբ մարախն ու թրթուրը բոյսն ու կանաչը գօսացնեն. երբ երաշտութիւն լինի. երբ ցաւ ու մահ պատահեն մարդկանց եւ անասուններին. երբ երկրաշարժ լինի, եւ ինչ վնաս որ պատահի երկրին, այն որ մարդկանց ձեռքով արած չէ, Աստուծոյ ցասումն է համարւում: Եւ այդ ցասման դէմն առնելու համար Քրիստոսի Խաչի պատկերն այսպէս բարձրացնում են երկնքի առաջեւ, որ պատուհասիչ հրեշտակը պատկառէ Խաչից, իսկ Աստուած հաշտուի: Եւ հաց ու մատաղ հասարակութեան բաշխելով՝ մարդիկ իրանց սրտի ներողութիւնը յայտնում են միմեանց եւ գթածութիւն են գործ դնում, որպէսզի Աստուած իրանց յանցանքները ներէ, գթած երկնաւոր Հայրը յետ առնէ իւր ցասումը:

Բինգէօլ.

Սա այն բարձր եւ աննման լեռն է, որ մեծ եւ փոքր Հայաստանի կենդրոնում է բուսել: Սրա գագաթն էնողը վայելում է անապական օդ, շատ ջինջ է երեւում իւր երկրների եթերը եւ քիչ էլ խոնարհեցնելով աչքերը՝ տեսնում է Հայաստանի ամեն կողմերը, ողջունում է Մասիսներին եւ Արագածին: Այստեղ Անիի գմբէթների եւ բերդերի բեկորների վրայ վայող բուերի արձագանքն ու սոյլը բերում է գարնան սուրը եւ խառնում է Բինգէօլի սոխակների եւ հովուաց սրինգների ձայների հետ: Վասպուրականի ծովը, Միջագետքի սկիզբը, Կարինը՝ Բինգէօլից սրատեսներին երեւում են, որ ամենայն կողմ իրանից ջուր է տալիս:

Բինգէօլը դժնդակ տարտարոս է ձմեռուայ եղանակին եւ դրախտ գարնան ու ամառուան ժամանակին: Բինգէօլը վեհ եւ ահաւոր չէ, այլ սիրուն. թագաւորին չի նմանում, այլ թագուհուն. շնորհաց լեռն է քան թէ քաջերի եւ դիւցազունների. սրա համար իւր վրայ եղած վէպերը ոչ Ագնաւորի, ոչ Դեւերի, ոչ յաղթողի եւ ոչ զինուորի ու թագաւորի են, այլ սիրոյ, զուարճութեան, առողջութեան, գեղեցկութեան եւ զարդի, անուշութեան, պարարտութեան, գուսանութեան: Որովհետեւ սրա բիւրաղբերաց եւ հազար ականց շուրջը ծաղիկների եւ բոյսերի բիւր տեսակն է փռուած. ջրարբի մարգեր, ամենադալար բանջարներ եւ խոտեր իրանց արմատներով, ուտելու, բուժելու, գոյն-գոյն ներկելու են գործ ածում: Նրա վայրի կենդանիները առիւծ եւ վագր չեն, այլ եղնիկ եւ այծեամն:

Այստեղ զբոսասէրները ուրախանալու են գալիս, հիւանդները օդն ու ջուրը ծծելով՝ կեանքը նորոգելու: Իսկ մեղունների տղոցն ու բզզոցը հիանալի ներդաշնակ են տալիս մարդիկների եւ թռչունների երգերին, անասունների

բառաչին, գորտերի կառաչին, գլգլացող առուակի եւ սուլացող սիւքի ձայնին: Անթիւ, անհամար են մեղունները, բայց միեւնոյն ժամանակ օձերն էլ սողոսկում են այդ ծաղիկների կողակով. նոքա էլ միեւնոյն ծաղիկներից հիւթ են առնում եւ վայելում են սուրբ օդը: Այստեղ մեղուններով մեղր է շինում եւ օձերով թոյն:

Գովելի են այս լեռան բարեկայելութիւնները, որ արարածներին հրաւիրում են այնտեղ տեսնել, վայելել Աստուծոյ սքանչելիքը:

Եւ որովհետեւ այնտեղի աղբիւրն ու ծաղիկն մէկ չէ, հազար է, ուստի եւ դժուար է լինում ճանաչել, թէ մարդ որ ծաղիկը որ աղբիւրի մօտ է տեսել: Եւ երբ որ մի հովուի վրայ բարկացել են, թէ ինչո՞ւ միտ չէ պահել իրան առողջացնող ծաղիկն ու ակը, հովիւը պատասխանել է.

«Բինգէօլ, հեզար գէօլ, ազգի գանըմ քիժան գէօլ»:

«Իւր ակն, հազար ակն, ես ի՞նչ գիտեմ, որ այն ակն: Եւ այս է եղել, իբրեւ, տեղի անուանակոչութեան սկիզբը»:

Աւելորդապաշտութիւններ.

Բարեպաշտական սովորութիւնները շատ անգամ աւելորդապաշտական եւ դիւթական բանք են դառնում: Ահա մի քանի օրինակ այն Հայերի կեանքից, որոնք քրդերէն են խօսում եւ քրդաբար են ապրում:

Նոցա քահանաները մուրացկանութեամբ են ապրում, հասարակ կարգաւ չգիտեն, տգէտ են, շատերն էլ կախարութիւն են անում:

Այդ Հայերը մեռելի վրայ սաստիկ ողբ եւ կոծ են ա-
նում: Եթէ մեռնողը անդրանիկ զաւակ է, յուզարկաւորու-
թեան ժամին մի ձի են զարդարում, մեռնողի հագուստը
ձիու վրայ են դնում, նրա սուրը, վահանը, հրացանը ձիու
վրայ են կախում: Մեռնողի Հայ, Քիւրդ եւ Եզդի բարե-
կամները ժողովում են. գիւղին մօտենալու ժամանակ սեւ
փաթաթոցներով գլուխները սքողում են եւ մեծ ձայնով
բօռում են. «Վ այլը մըն բրայօ, վ այլը մըն բրայ-
օ». ստէպ կրկնելով այս վայերգը:

Յուզարկաւորութեան հանդէսը սկսում է բոլոր գիւ-
ղացոց բազմութեամբ եւ դադարի առաջնից իբր քսան կա-
նայք՝ անոյշ ձայնեղ, սեւեր փաթաթած գլխներին, քիւրդերէն
լեզուով ողբեր են կարդում: քսանից աւելի էլ տղամարդիկ՝
սեւ ապաններ քաշած, գլուխները սգաւոր՝ ողբասաց կանանց
յետեւից են գնում: Երբեմն-երբեմն կանանց ողբերի ձայնը
ընդհատում է, այդ ժամանակ սգաւոր մարդիկ միաձայն
աղաղակում են. «Վ այլը մըն բրայօ, վ այլը մըն
բրայօ»:

Թաղումից յետոյ եօթն օր այս հանդիսով գնում են
գերեզման ու գալիս: Ով որ ննջեցեալին շատ է սիրում,
աւելի է գոռում:

Մի անգամ անձրեւ չեկաւ, դաշտը չորանում էր. ա-
սացին, թէ հարուստները կախարդութեամբ կապել են եր-
կինքը, որ իրանց ամբարած ցորենը թանկ-թանկ ծախեն:
Ուստի որքան ժողովրդական կախարդներ կային, աշխատե-
ցին որ ամպերի կապանքն արձակեն. որը քարի վրայ մի բան
գրեց, ջրի մէջ ձգեց, որը մեռելի գանգ գերեզմանից հա-
նեց՝ գետը ձգեց, որը էշի գլուխը ջրով լուաց, եւ ինչ որ
արին, անձրեւ չեկաւ: Մէկ գիւղի կանայք սպառազինած

գնացին միւս գիւղի սպառազէն կանանց դէմ, երկու կողմից
հրացաններ պարպեցին, վերջապէս մէկ կողմը յաջողեցաւ մի
ոչխար խել միւսից, բերեց զոհեց, գլուխը կտրեց եւ մեծ
հանդիսով տարաւ, գետը ձգեց, որ անձրեւ գայ: Հրէաների
գանգեր հանեցին գերեզմանից՝ ջուրը ձգեցին: Ուզում էին
ողջ քահանայի գլուխը կտրել՝ ջրին նուիրել, բայց անձրեւ
եկաւ եւ կենդանի զոհն աղատուեցաւ:

Գիւղից մի տղայ անյայտացաւ. ծնողները շատ իզուր
որոնելով՝ դիմեցին կախարդներին: Նոքա պատասխանեցին,
թէ տղային ջրինըր յափշտակել են, գազանների հովիւ են
շինել: Մէկ որսորդ էլ վկայում է, թէ ինքը սարի վրայ մի
գազան տեսաւ եւ ուզում էր հրացանով նրան սպանել, բայց
փոխուեցաւ, մարդու պէս երեւեցաւ աչքին. հրացանը վեր
դրեց, այն մարդը դարձեալ գազան դառաւ. նորից ուզեց
սպանել, մարդ դառաւ. վերջապէս հարցրեց. «Ի՞նչ ես»:
— «Ես Խաչօն եմ», ասաց եւ անհերեւոյթ եղաւ:

Թագուցած գանձեր.

Հայաստանի ամեն գաւառի բնակիչներն այն կարծիքն
ունեն, թէ շատ տեղերում գանձեր կան պահած. ուր որ
մի բլրակ, աւերակ, այր, խոռոչ տեսնես՝ նրա վրայ կսկսեն
պատմութիւն անել, թէ գանձ կայ, բայց թ ը լ ի մ ս ը պէտք
է գիտենալ, որ գտնուի:

Թըլիսմը անուշագիր թողնելով, որ տգիտութեան կամ
խաբէութեան մի խօսք եւ հնարք է, բայց որովհետեւ ամե-
նայն տեղ տարածուած է գանձի մասին եղած կարծիքը,
ուրեմն անհնարին բան չպէտք է համարել, թէ մեր նախնիքը
իրանց ոսկին ու արծաթը, գրամն ու ակունքը, զարդերն

ու թանկ նիւթերը նշանով մի տեղ, կամ իրանց տան հիմքի տակը, կամ գերեզմանների մէջ խոր պահում էին, եւ այս բանի մասին մեր պատմագիրներն էլ շատ վկայութիւններ են աւանդել մեզ. շատ աշխարհականեր այդ գիտենալով՝ մեր նախնիներին ստիպում էին, որ իրանց թաքուցած գանձը հանեն բերեն: Մեր թագաւորների շիրիմները քանդում էին, ոսկորները հանում էին, որ նոցա հետ գանձ էլ հանեն: Մինչեւ այսօր էլ Հայերը ուր որ մի նշանաւոր շիրիմ եւ մի դամբան գիտեն՝ կարծում են թէ գանձ կայ նրա մէջ կամ նրան կից: Այս սովորութիւնը ծագել է կամ բարբարոսների եւ յափշտակողների երկիւղից, կամ գուցէ եւ ագահութիւնից: Մինչեւ այսօր էլ շատ տեղ պատահապէս փորելով՝ անակընկալ կերպով գտնում են հին դրամներ, զարդեր, զէնքեր, գործիքներ: Մինչեւ այսօր էլ կան մարդիկ, որ այդ սովորութիւնն ունին. կայ մարդ, որ իւր տան պատի մէջ է դնում իւր գանձը եւ քարով ու աղիւսով շարում է. կայ՝ որ սենեակի կամ բակի յատակի աղիւսի կամ սալի ներքեւ փորում է եւ խոր պահում:

Ազնաւորի գերեզման.

Սիփանայ տակը Գրգի մի գիւղ կայ, որին տիրում է մի շէյխ, այսինքն Գրգերի գլխաւոր եւ մարգարէ: Այս շէյխի տան առջեւ ութը քայլ մեծութեամբ մի գերեզման կայ, որ մի քարակոյտով բարձրացած է: Անցուդարձ անողները եւ մերձաբնակ Հայերը այդ գերեզմանին անուանում են Ազնաւորի գերեզման. իսկ շէյխն ասում է, թէ նրա նախնիքին է, որին եւ իրօք մեծարում է իբրեւ մի մարգարէի շիրիմ: Այդ հսկայ գերեզմանը եւ իւր ազնաւոր անունը, որ է ազնուական (ազնիւ բառը համարւում է իւր տոհմային գլուխ, իւր ազգի տանուտէր), մեծ նշանա-

կութիւն ունին:—Բայց արդեօք ո՞վ կարող է հաստատել, թէ Գրգերը Հայերից չեն խլել այդ գերեզմանի յիշատակը, ինչպէս եւ շատ բան նոցանից յափշտակել են. գիտենալու բան է, որ այդ գերեզմանը Հարքի մէջն է, մեր Հայկ նահապետի բնիկ գաւառի մէջ. ինչո՞ւ ուրեմն Հայկի գերեզմանը չէ դա, կամ վերջապէս մի ուրիշ Հայ նահապետի գերեզման: Այսպիսի մեծագիր եւ ազնաւոր գերեզմաններ շատ կան տեղ-տեղ ցիրուցան եղած, որոնք նոյնպէս Հայոց նշաւոր Հարանց հսկաների կամ նախարարների շիրիմը պէտք է լինին: Իսկ շէյխերի տիրելուն բնաւ զարմանալու բան չկայ. դոքա կամ հայութիւնից են դարձել, կամ անհայ գտնելով այդ տեղերը, եկել տիրել են եւ օճախ են շինել:

Ժողովրդեան բերանով ազնաւորին դեւ էլ են ասում. դեւը միշտ դիւցազն, հսկայ, տիտան է: Եթէ ուզենան մէկ յաղթող եւ հսկայ մարդու վրայ խօսել, դեւ բառ են գործածում: Եւ միշտ այսպէս է հասկացուած, թէ դեւերը բնակւում են լեռներում եւ այրերում, անլոյս գբերում, անջուր հորերում եւ անջրդի անապատներում: Թէ նոցանից մէկը հազար մարդու կարող է յաղթել. թէ լեռների չափ քարեր կարող են վերցնել. թէ մարդու միս եփում՝ ուտում են. թէ թագաւորի աղջկան գողանում են, եւ այլն:

Նէմրութ, Սիփան և Վանայ ծով.

Մշոյ դաշտի արեւելեան հիւսիսակողմը կայ մէկ լեռուն, Նէմրութ անունով, որ մէկ երեսը Մանազկերտու կողմն է նայում, մէկ երեսը Խլաթն է, Վանայ ծովի ափին եւ միւս երեսը Մշոյ դաշտն է. իւր թեւի տակ ունի նաեւ մէկ փոքրիկ եւ իրանից բաժանած տանձաձեւ լեռն, սեւ եւ մերկ. այս փոքր լեռուն է Գրգուռը:

Այդ լեռներն ոտներից Ռահվայ դաշտն է երկարում, որի ձմեռը սաստիկ ձիւնները շատ են ամեն տարի եւ բուքը պակաս չէ։ Ճանապարհորդները շատ անգամ մի քանի օր այդտեղ փակուած արգելում են եւ աւազակների բաժին են դառնում, որոնց որջն է այդտեղը։

Դաշտի մի եզրը մինչեւ ծովի ափը կրտսնես մի կարգ տնկածի կամ կանգնածի պէս սեւ քարեր, որոնք հեռուից եւ մութ ժամանակ մարդուն կարող են խաբել՝ իբր թէ կարաւան են դռքա կամ մարդ եւ ուղտ։ Տեղացիք Բէլի ուղտեր եւ ուղտապաններ են անուանում նոցա եւ այս պատմութիւնն են անում։ Կռապաշտ թագաւոր է եղել Բէլը եւ մեծ զօրքով կռիւ է եկել Հայոց թագաւորի ու երկրի վրայ։ Հայոց թագաւորը Աստուծոյ ձեռքով սպանել է Բէլին եւ հանել է Նէմրութի գլուխը, որ ամեն կողմից երեւելի լինի։ մարդիկ եւ ուղտերն էլ իրանց վախից քար են կտրուել։

Սիւփան մի լեռնադաշտի անուն է, որ Նէմրութի գօտին է, բարձրադիրք, եւ արեւելեան կողմում երկարում է այն մեծ ու շատ բարձր սարի գլխի հետ կապուելու համար, որ Սիւփանայ սար է կոչում։ որպէս թէ Նէմրութը լինէր Բէլը եւ Սիւփանը մեր Հայկը, որ Բէլին իւր ոտքի տակ կապել է։ Խիստ անուանի է խոտաւէտ եւ օգտաւէտ լինելով։ Իւր առաջնն է Վանայ ծովի երեսը, բնակութիւնները ընդհանրապէս ծառազարդ են եւ բաւական զառիւյայր դիրք ունենալով պատուական եւ առատ պաղպաղ ջրեր են հոսում։ Բնակիչը վայելում է Վանայ ծովի անմահական օդը, նրա գեղածիժաղ երեսը։ Վանայ բերդի եւ նրա այգեստանների, Արտամետի ծառաստանների եւ ծովեզրի բոլոր միւս շէնքերի եւ աւանների սքանչելի տեսարանը, ամենացանկալին Վարազը, Հայոց Զորը, Ռշտունիք, Շատախու եւ Մոկաց լեռները,

Նարեկայ վանքը, Աղթամարայ, Կտուց եւ Լիւմ անապատների կղզիները եւ սուրբ տաճարների երկնաման գմբէթները։ Ծովի հարաւային կողմն էլ Կարճկանից անտառները եւ ծովի երեսը լողացող առագաստաբաց նաւերը։ Մի վայրկեան բարձրացիր այս Սիւփանայ հովիտը, նստիր, հանգստացիր, շնչէ անմահական ծաղիկների եւ դալարիների մէջ, ուր մի վտակ է խոխոջում, ուր սոխակ է դալլալում, ուր կռունկն է կրկում, ուր ծովը առաջեւ ծփծփում է։ մի քիչ երջանկացիր։ Եւ դէ բարձրացիր, սիրտ ան եւ իմացիր, որ այդ տեղը Քիւրդի խոտնոցն է։ այդ տեղը Հասնանցի քրդերի բնակութիւնն է։

Քիչ էլ առաջ գնա. ահա Սիւփանայ սարը, այդ ահագին, բարձր, մասիսակերպ սարը, որին Գոռոզ լեռն են անուանել։ Բնակիչները մէկ բան են երգում այս լեռան մասին իբրեւ հին երգ եւ ասում են.

Նոյայ տապանն եկաւ ի Սիւփան,

Ասաց.

«Սիւփան, ան զիս, ան զիս»։

Սիւփանն ասաց.

«Գընա ի Մասիս, գընա ի Մասիս,

«Որ մեծ է քան զիս, որ բարձր է քան զիս»։

Եւ տապանը հեղեղի ջրի երեսին ալէծովի լինելով եւ գալով Սիւփանին՝ Գրգուռի գլխով անցել է եւ քսուելով կամ գրգուռով այս լեռան սուր գլուխը, տաշել է եւ անցել է։ Վանի պառաւանները մի վէպ ունին, թէ վանայ ծովի մէջ վիշապ է կենում։ Վիշապը եթէ հազար տարեկան դառնայ, շատ սարսափելի կըմեծանայ. ուստի հրեշտակները երկնքից իջնում են, շղթայով կապում են եւ վեր են քաշում, այնքան բարձրացնում են, մինչեւ որ արեգակի առաջ են հանում,

ուր կիզիչ հուրը վառում եւ մոխիր է դարձնում վիշապին։ Աւելացնում են, թէ մեծ շառաչիւնի ձայներ են լսում երկինք քաշած ժամանակ։ Թէ երբեմն այնքան գայարում, որոր-մորոր է լինում, որ պոչը կտրւում է եւ վեր ընկնում։ Գուցէ թաթառ հողմի նկարագիրն է այս, որ ծովից ջուր ու ցամաքից փոշի, ծառ եւ քար է բարձրացնում ամպերի մէջ եւ վեր է թափում։

Ով որ Վարագայ լեռան վրայ բարձրանայ, կրտսնէ, թէ ինչպէս արեւը վերջալուսի ժամանակ ծովի մէջ է մըտնում լողանալու, մաքրուելու եւ հանգստանալու համար՝ օրուայ ճանապարհորդութիւնն անելուց յետոյ։ Այդ ժամանակ արեւմուտքում սուրբաբար երեւում են շառագոյն, մոխրագոյն եւ ձիւնագոյն ծալ-ծալ ամպեր՝ դռքա արեգակի անկողնի քօղն ու վարագոյրներն են։ Նորա անկողինը ծովի տակին է ձգուած, փրփուրի վրայ։

Վարագայ սարից երեւում է նմանապէս արեւելքում, արշալոյսից առաջ, արեւի ծագումը։ Այդ ահագին լեռան տակից նախ դուրս են գալիս 12 դաւաղներ, սեւ-սեւ արաքներ. եւ այդ լեռան վրայ լուսեղէն ճիպտոտներով ճառագայթի պէս խփում են. լեռուր ցածանում է, բոլոր սարերն իրանց գլուխը խոնարհեցնում են. արեւը իւր երեսը լուանում է ջրի ցօղերով եւ այդ ժամանակ սրսկւում են սարերն ու դաշտերը. այս ջրի սրսկումից բոլոր թռչունները արթնանում, վեր են թռչում եւ ճլվում են. յանկարծ արեւի ոսկի գլուխն ու հրեղէն մաղերը երեւում են։ Հրեշտակները վեր են քաղում արեգակի անկողինը, հանում եւ հագցնում են նրա հալանները։—Արեգակը ջաղացի ջրտան ճախրի կամ գունտի ձեւն ունի, որ գլորուելով պտըտւում է եւ առաջ է գնում, եւ այդ գնդի փառերից լոյսի ճառա-

գայթներ են ցոլանում, ինչպէս ջրի ցնցուղը ջաղացի գունտից։ Երբեմն սատանաները բիւր բիւրոց ժողովում են եւ աշխատում են հակառակ կանգնել արեւին, որպէս զի նրա լոյս երեսը մարդիկ չտեսնեն, բայց հրեշտակները հրեղէն սրով պատերազմում են, դուրս են ձգում՝ նոցա սեւ ամպերի միջից։ Եւ այս կռուի ձայնն է ամպերից լսուած որոտումն. փայլակը՝ Գաբրիէլ հրեշտակի սուրն է, կայծակը՝ հրեղէն նետն է, իսկ ծիածանը՝ աղեղն է։

ՄՏԵՐԻ ԴՈՒՈՐ.

Վանայ բերդից դէպի արեւելք նայելով՝ մի լեռնագօտի կայ, որի արեւելեան գլուխն անուանւում է Զըմփ-ղըմփ մաղարայ, արեւմտեան ծայրը՝ Ագրափի եւ մէջ տեղը՝ ՄՏԵՐԻ ԴՈՒՈՐ։ Գոցա դիմացն են Վանայ երեւելի այգեստանայքը։ Զըմփ-ղըմփ մարաղան մի ընդարձակ քարայր է, ուր ձայն արձակած ժամանակ զըմփ-ղըմփ արձագանք է տալիս։ Ներսը, այդ քարայրի ամենամութ անկեան մէջ, ճանապարհ կայ, որտեղից սաստիկ քամի է փչում։ այդ լեռնափոր ուղին, ասում են, մինչեւ Վանայ բերդի մէջ է տանում։ Ինքը Զըմփ-ղըմփ մարաղան էլ բերդաձեւ գագաթ ունի, եւ քանի որ փորել են, այնքան աւելի շէնքեր են գտել մէջը՝ զարմանալի շէնքեր կոփածոյ քարից լայն սանդուխներով, մէջը հողէ կարամներ, կժեր, արհեստական աթոռներ, պղնձէ թափածու արձաններ, երկաթէ նետեր, խոփեր, եւ այլն։

ՄՏԵՐԻ ԴՈՒՈՐ բոլորովին մերկ քար է, որը որ մեծ արհեստով տաշել, կոկել են մեծ դռան ձեւով կամ աւելի ճիշդն ասել, մի տախտակի ձեւով եւ սիրուն քառանկիւն շրջանակով, վրան գրել են բեւեռագիրներ՝ խիստ յստակ։

Այդ գրերը շատ հին գրեր են եւ պատմում են ամենահին ընդհանուր ժողովրդեան գլխին եկած անցքերը:

Մհերի դռան վերեւից կաթ-կաթ եւս ջուր է ծորում: Եւ ասում են. «Մհերն եւ իւր ձին Աստուծոյ հրամանով փակուել են այնտեղ: Այն սեւ ջուրը Մհերի ձիու քրտինքն է: Այդ դրան ներսը ճախրի ֆալակն է պըտըտում, այսինքն աշխարհքի մարդկանց կամ երկրագնդի ճախրը-անիւր: Մհերը շարունակ նրա վրայ նայում է. երբ որ այդ ճախրը դադարի, այն օրը Մհերը կազատուի, դուրս կըգայ եւ աշխարհքը կաւերի»: Եւ թէ՛ «Ամեն տարի Համբարձման գիշերը երկինք ու գետին իրար համընկնում են եւ այդ րոպէին Մհերի դուռը բացւում է: Ով որ արթուն է մնացել, այդ վայրկեանը տեսել է, ինչ որ սիրտն ուզել է այնպէս է եղել: Շատ մարդիկ միայն ոսկի են ուզել եւ այդ վայրկեանին մտել են դուրս բերելու, բայց ագահ լինելով, ուզեցել են շատ վերցնել եւ ուշացել են. դուռը փակուել է, նորա մնացել են ներսը»:

Մեր պատմութիւնն ուրիշ տեսակ է պատմում: Եւ առհասարակ ժողովուրդը շատ տեսակ պատմութիւններ ունի Մհերի մասին:

Վ Ե Ր Զ



ՆԻԽԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Աստուծոյ Դաւիթ—Գլուխ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ,
Է, Ը, Թ, Ժ, 1—37
2. Ժամանակագրական աղիւսակ 38

ՑԱՆԵԼՈՒՄ.

3. Սուրբ Կարապետ 39
4. Երգ շինականաց 41
5. Նաւակոծեալը Վանայ ծովի մէջ 42
6. Օրիորդի սեւ օրը 43
7. Տաղ վասն օտարութեան 44
8. Տաղ վասն մահուան 45
9. Բաղդադ քաղաք 46
10. Սենեքերիմը եւ նրա որդիքը 47
11. Գուռգուռայ Աստղիկի լոգարանը 47
12. Մշոյ Աշխարհ կամ Տարօն 48
13. Ցասման խաչ 51
14. Աւելորդապաշտութիւններ 53
15. Թագուցած գանձեր 55
16. Ազնաւուրի գերեզման 56
17. Նեմրուծ, Սիփան եւ Վանայ ծով 57
18. Մհերի դուռը 61

06	.	.	.	.	Արք. Երանան	1
11	.	.	.	.	Երանան Երան	2
24	.	.	.	24 Բիւր Երան Երան	3	
34	.	.	.	Երան Երան	4	
44	.	.	.	Երան Երան	5	
54	.	.	.	Երան Երան	6	
64	.	.	.	Երան Երան	7	
74	.	.	.	Երան Երան	8	
84	.	.	.	Երան Երան	9	
94	.	.	.	Երան Երան	10	
06	.	.	.	Երան Երան	11	
11	.	.	.	Երան Երան	12	
24	.	.	.	Երան Երան	13	
34	.	.	.	Երան Երան	14	
44	.	.	.	Երան Երան	15	
54	.	.	.	Երան Երան	16	
64	.	.	.	Երան Երան	17	
74	.	.	.	Երան Երան	18	
84	.	.	.	Երան Երան	19	
94	.	.	.	Երան Երան	20	
06	.	.	.	Երան Երան	21	
11	.	.	.	Երան Երան	22	
24	.	.	.	Երան Երան	23	
34	.	.	.	Երան Երան	24	
44	.	.	.	Երան Երան	25	
54	.	.	.	Երան Երան	26	
64	.	.	.	Երան Երան	27	
74	.	.	.	Երան Երան	28	
84	.	.	.	Երան Երան	29	
94	.	.	.	Երան Երան	30	

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.	Աղայեանց՝ Ուսումն Մայրենի Լեզուի, ա. տարի .	25 Կ.
2.	» Ուսումն Մայրենի Լեզուի, բ. տարի .	40 Կ.
3.	» Ուսումն Մայրենի Լեզուի, գ. տարի .	55 Կ.
4.	Գէորգրէկեան՝ Փողովածու թուար. խնդիրների՝ Ամբ. թուեր	40 Կ.
5.	» » » » Կոտոր. թուեր	50 Կ.
6.	Թումանեանց՝ Начальная Книга Русскаго Языка.	25 Կ.
7.	Մանգիրեան՝ Նահապետական աշխարհ . . .	60 Կ.
8.	» Հենչէլի՝ բանաւոր և զրաւոր հաշուելու » խնդիրներ, առաջին և երկրորդ տարի .	40 Կ.
9.	» Բանաւոր և զրաւոր հաշուելու խնդ. գ. տարի	50 Կ.
10.	» Ընտանեկան Աշխարհ . . .	25 Կ.
11.	» Դիւցազնական Աշխարհ . . .	25 Կ.
12.	Տէր-Ղևոնդեան՝ Մայրենի Լեզու, առաջին տարի .	35 Կ.
13.	» Մայրենի Լեզու, երկրորդ տարի . .	40 Կ.
14.	» Մայրենի Լեզու, երրորդ տարի . .	50 Կ.
15.	» Մայրենի Լեզու, չորրորդ տարի . .	65 Կ.
16.	» Մայր. Լեզուի բաց. ձեռնարկը. ա. տարւույ » Մայրենի Լեզուի քերականութ. տարերքը,	Հրի
17.	» մասն առաջին.	30 Կ.
18.	» Մայրենի Լեզուի քերականութեան տարերքը, » մասն երկրորդ.	40 Կ.
19.	» Հայորդի՝ Սրբազան պատմ. Հին Կտակ. .	50 Կ.
20.	» Սրբազան պատմութիւն Նոր Կտակարանի	50 Կ.

1. Գրքերի վաճառումը կանխիկ է: Ապագի ոչոքի դերք չի ուղարկուում, քայց ցանկացողների համար գրքերի արժէքը կարող ենք վերադրանել, որ նոքա վճարեն այն փոստային վարչութեանը կամ կանտորին, որի միջոցով պիտի տանան գրքերի ծրարը կամ սնդուկը:

Դիմել՝ Николаю Теръ-Гевондянъ. Тифлисъ.

Հասցէս փոստատանը յայտնի է:

2013

4004

ՀՀ Ազգային գրադարան



NL0059813

